

ԹՈՒՐԲ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1919—1921 թթ.

Թուրքիայի անկախության պատերազմի տարիների արտաքին քաղաքականության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում նրա փոխհարաբերությունները Անտանտի երկրորդ խոշոր տերության՝ Ֆրանսիայի հետ: Վերջինիս քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ խիստ տարբերվում է, Անտանտը ոգեշնչող տերության՝ Անգլիայի քաղաքականությունից: Այն ժամանակ, երբ անգլիական իմպերիալիզմը Մուդրոսի պայմանագրով Օսմանյան կայսրությունը ծնկի բերելուց անմիջապես հետո ձեռնամուխ եղավ նրա բաժանման գործին, Ֆրանսիական իմպերիալիզմը, ընդհակառակը, հանդես էր գալիս Թուրքիայի մասնատման և պետական ինքնուրույնության վերացման դեմ: Դրա պատճառը Ֆրանսիական մոնոպոլիաների ու դրամատիկների կենսական շահագրգռվածությունն էր թուրքական գործերում: Ֆրանսիական կապիտալը գերիշխող դիրք էր գրավում թուրքական տնտեսության մեջ: Օտոմանյան պարտքի 60,31 տոկոսը (2.454.417.377 ֆրանկ) բաժին էր ընկնում Ֆրանսիային, մինչդեռ Անգլիային՝ միայն 14,19 տոկոսը (577.499.281 ֆրանկ) և Կերմանիային՝ 21,31 տոկոսը (867.583.506 ֆրանկ)²: Օտոմանյան պարտքի վարչությունում, որը

¹ Սույն հոդվածում հարցը քննության է առնվում միայն արտաքին քաղաքական և դիվանագիտական կողմերով: Այդ նույն տարիներին Կիլիկիայում տեղի ունեցած անցքերին մենք անդրադառնում ենք առանձին:

² „L'Asie française“, № 175, février-juillet 1919, p. 180. Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Բերտելյուի տվյալներով Օտոմանյան պարտքի 80 տոկոսն էր գտնվում Ֆրանսիական ավանդատուների ձեռքում, Sh'а Ллойд Джордж. Правда о мирных договорах, т. II, М., 1957, էջ 402:

ներկայացնում էր 6 տերութիւններին՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի, Բելգիայի ու Հոլանդիայի շահերը, Ֆրանսիական ներկայացուցիչները գրավում էին գերիշխող դիրք։ Հիշյալ վարչութիւնը Կայսերական օտոմանյան բանկի հետ համատեղ ստեղծել էին հզոր մի ընկերութիւն՝ Օսմանյան կայսրութեան ծխախոտի ձեռնարկութիւնների վարչութիւնը (Régie des tabacs de l'Empire Ottoman), որի կապիտալի կեսը՝ 20 մլն ֆրանկ, գտնւում էր ֆրանսիական դրամատերերի ձեռքում։ Միախոտի մենաշնորհը փաստորեն պատկանում էր ֆրանսիական կապիտալիստներին։ Պատերազմին նախորդող տասնամյակում Ֆրանսիան, գործակցելով Գերմանիայի հետ, ձեռք էր բերել մի շարք երկաթուղիներ կառուցելու կոնցեսիաներ։ Դամասկոս-Համա (638 կմ), Յաֆա-Երուսաղեմ (87 կմ), Մուղանյա-Բրուսա (41 կմ), Իզմիր-Կասաբա (701 կմ), Սալոնիկ-Կոստանդնուպոլիս (510 կմ) և դեպի Սև ծով ձգվող երկաթգծի մի հատվածը (35 կմ)՝ 2.077 կմ ընդհանուր երկարութեամբ։ Հիշյալ երկաթուղիների շինարարութեան ու շահագործման մեջ ֆրանսիական կապիտալիստները ներդրել էին 550 մլն ֆրանկ³։ Ֆրանսիան զգալի առավելութիւն ուներ իր գլխավոր մրցակիցների՝ Անգլիայի ու Գերմանիայի նկատմամբ, մասնավոր ձեռնարկութիւններում ներդրած իր կապիտալներով, որոնք կազմում էին 830.856.000 ֆրանկ կամ 50,58 տոկոսը։ Անգլիայինը և Գերմանիայինը համապատասխանորեն կազմում էին 235.818.675 ֆրանկ (14,36%) և 575.903.000 (35,06%)⁴։ Օտարերկրյա մասնավոր ընկերութիւնների ներդրումները թուրքական ձեռնարկութիւնների մեջ բաշխւում էին հետևյալ կերպ⁵։

Ինչպես երևում է բերված աղյուսակից, Ֆրանսիան բոլոր բնագավառներում էլ գերազանցում էր Անգլիային ու Գերմանիային, ըստ որում երկաթուղիների ու նավահանգիստների կառուցման մեջ ներդրած փր կապիտալներով նա բացահայտ գերակշռութիւն ուներ Անգլիայի նկատմամբ, իսկ հանքարդյունաբերութիւնը ամբողջովին կենտրոնացած էր նրա ձեռքում։ Եվ եթէ նկատի ունենանք, որ կայզերական Գերմանիան առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմում պարտութիւն կրելով, զրկվել էր իր բոլոր գաղութներից, ազդեցութեան ոլորտներից ու արտոնութիւններից,

³ Տե՛ս «Французские интересы в Турции», «Новый Восток», 1923, № 3, էջ 475—476։

⁴ „L'Asie française“, № 175, p. 180.

⁵ Նույն տեղում, էջ 181։

առավել հասկանալի կդառնա այն հետաքրքրությունն ու շահագրգռվածությունը, որ հանդես էին բերում ֆրանսիական կապիտալի ներկայացուցիչները թուրքական գործերում: Իրավացի էր մոլիսխար-փաշան (թուրքական նախկին դեսպանը Բեռլինում), գրելով, որ Միջերկրյա թաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ պայմանավորված էր նրա դրամատերերի բուռն ցանկություններով:

	Ֆրանսիա		Անգլիա		Գերմանիա	
	Ֆրանկ	0/0	Ֆրանկ	0/0	Ֆրանկ	0/0
Բանկեր	85.000.000	37,77	75.000.000	33,33	65.000.000	28,9
Ներկաթուղիներ	512.784.000	46,97	114.693.675	10,49	466.078.000	42,61
Նավահանգիստներ և նավամատույցներ	55.375.000	67,97	10.000.000	12,27	16.100.000	19,76
Ջրային տնտեսություն	33.000.000	88,65	—	—	4.225.000	11,35
Հանքեր	42.297.000	100	—	—	—	—
Այլ ձեռնարկություններ	102.400.000	62,82	36.125.000	22,15	24.500.000	13,03
Ընդամենը	830.856.000	50,58	235.818.675	14,36	575.703.000	35,06

Ֆրանսիական կապիտալիստների տնտեսական շահերի տեսակետից առանձին հետաքրքրություն էր ներկայացնում Կիլիկիան: Այս շատ հարուստ երկրամասը մեծ հեռանկարներ էր խոստանում ֆրանսիական արդյունաբերության մի շարք ճյուղերի զարգացման համար: Արտակարգ բերրիությամբ աչքի ընկնող Կիլիկիայի հողը խիստ բարենպաստ էր գյուղատնտեսական բարձր կուլտուրաների աճեցման և, հատկապես, բամբակագործության զարգացման համար: Համաշխարհային պատերազմից առաջ մշակվող հողատարածությունները Կիլիկիայում կազմում էին 2.600.000 հեկտար⁷: Բամբակի մշակման և արտահանման շահավետության վրա առաջինը ուշադրություն էին դարձրել գերմանական ձեռնարկատերերը՝ 1903 թ.

6 *SS» Ю. А. Боев, Ближний Восток во внешней политике Франции. (1898—1914), Киев, 1964, էջ 50—51.*

⁷ Testis, *L'œuvre de la France au Levant (Syrie et Cilicie)*. Paris, 1921, p. 81.

հիմնելով Գերմանա-լեանտական բամբակի ընկերությունը, որը կարճ ժամանակում իր ձեռքում էր կենտրոնացրել բամբակի ամբողջ արտահանությունը և հիմնել բամբակազտիչ մի քանի խոշոր գործարաններ⁸։ Պատերազմից առաջ Ֆրանսիային չհաջողվեց կաշուն դիրքեր գրավել այս բնագավառում և ընդհանրապես Կիլիկիայի տնտեսության մեջ։ Այժմ, Գերմանիայի պարտությամբ, այդ վտանգավոր մրցակիցը դուրս էր գալիս հաշվից, իրական հնարավորություն ստեղծելով այդ շրջանում Ֆրանսիայի հաստատման համար։ Կիլիկիայի տնտեսության ճանաչված մասնագետ Ֆրանսիացի Աշարի հաշվումներով, միայն Կիլիկիայի բամբակը բավական էր ֆրանսիական տեքստիլ արդյունաբերությունը անհրաժեշտ հումքով ապահովելու համար։ Նույն հեղինակի հեռանկարային ծրագրերով, հացահատիկային կուլտուրաների արտադրանքը Կիլիկիայում 150 հազար տոննայից (1914 թ.) կարելի էր հասցնել 1.800.000 տոննայի⁹։ Ֆրանսիական մի այլ տնտեսագետ՝ Ժորժ Դերոնը «Ֆրանսիայի տնտեսական ապագան Արևելյան միջերկրածովականի ավազանում» վերնագիրը կրող հոդվածում պետական գործիչների ու գործարար շրջանների ուշադրություն էր հրավիրում Կիլիկիայի տնտեսական մեծ հեռանկարների վրա։

«Կիլիկիայում ջերմաշափը ցույց է տալիս ձմռանը 13 աստիճան, գարնանը՝ 21, ամռանը՝ 23 և աշնանը՝ 20 աստիճան, ինչպես Կորսիկայում։

Նվ մենք պետք է զարմանանք, տեսնելով ամենուր ամենաօգտակար կուլտուրաների մշակումը՝ հացահատիկ, բամբակ, ծխախոտ, ձիթենի, անուշահոտ բույսեր, բուժիչ բույսերի տեսակներ, քունջութ, վալոնիա և այլն և այլն»¹⁰։

Ֆրանսիայի շահերը Թուրքիայում և, մասնավորապես, Կիլիկիայում, չէին սահմանափակվում, սակայն, սոսկ տնտեսական ու դրամական ոլորտներով, այլ ընդգրկում էին նաև քաղաքական ու մշակութային ոլորտները։ Ֆրանսիան եվրոպական առաջին տերությունն էր, որ տակավին 1535 թ. Բ. Դուան հետ կնքեց այն պայմանագրերը,

⁸ Տե՛ս «Раздел Азиатской Турции, под. ред. Е. А. Адамова, М., 1924, Предисловие, էջ 20։

⁹ Testis, op. cit., p. 81.

¹⁰ Georges Derbons, L'aventir économique de la France dans le bassin méditerranéen oriental. «Le monde industriel, commercial et agricole», nomenclature, № 1, 25 février, 1920, p. 7. Կիլիկիայի տնտեսական նշանակությունը մասին տե՛ս նաև Pierre Redan, La Cilicie et le problème ottoman. Paris, 1921, էջ 114—128։

որոնք հետագայում հիմք դրեցին կապիտուլյացիաների ռեժիմին։ Ակաժ այդ ժամանակներից, Ֆրանսիան հանդես գալով որպես Արևելքի բոլոր կաթոլիկների «խնամակալ ու պաշտպան», հետզհետե իր ազդեցությունն էր տարածում Օսմանյան կայսրությունում, հատկապես գրականության, գիտության ու մշակույթի բնագավառներում։ Ֆրանսիերները դարձել էր երկրորդ լեզու մտավորականության համար։ Ֆրանսիան ուսումնական հաստատությունների լայն ցանց էր ստեղծել Թուրքիայում։ 1914 թ. վիճակագրական տվյալներով, ֆրանսիական դպրոցների ընդհանուր թիվը հասնում էր 500-ի, որոնցում սովորում էր 59.414 աշակերտ¹¹։

Առավել մեծ թիվ էին կազմում (հարաբերական) ֆրանսիական հաստատությունները Կիլիկիայում։ Թեև համաշխարհային պատերազմի տարիներին փակված ֆրանսիական ոչ բոլոր դպրոցներն էին, բացվել պատերազմից հետո, այնուհանդերձ, 1920 թ. մայիսին այստեղ գործում էին ֆրանսիական իշխանությունների պաշտոնական հովանավորության տակ գտնվող 90 դպրոց և 106 մասնավոր դպրոցներ¹²։

Ֆրանսիան փր ազդեցությունն էր տարածում նաև բարեգործական մի շարք հաստատությունների՝ հիվանդանոցների, պանսիոնատների, ծերանոցների, որբանոցների, դիսպանսերների և այլ հիմնարկների միջոցով, որոնք տեղակայված էին Կոստանդնուպոլսում և Անատոլիայի ու Կիլիկիայի գրեթե բոլոր խոշոր քաղաքներում¹³։

Թուրքիայի հանդեպ ֆրանսիական կառավարող շրջանների վարած քաղաքականության մեջ, տնտեսական, դրամական ու մշակութային գործոնների հետ մեկտեղ ոչ նվազ կարևոր նշանակություն ունեն կրոնական գործոնը։ Որքան էլ արտաքուստ տարօրինակ, թվա, անժխտելի է, սակայն, որ քրիստոնեական Ֆրանսիան հանդես էր գալիս ոչ թե Արևելքի քրիստոնյաների պաշտպանությամբ, ինչպես հաճախ փորձում են ներկայացնել ֆրանսիական իմպերիալիզմի ջատագույնները, այլ, ընդհակառակը, ելնելով իր մերձավորարևելյան ընդհանուր շահերից, նա որպես կանոն պաշտպանում էր սուլթանական բռնապետական կարգերը՝ ընդդեմ հպա-

¹¹ S. M. Мустафа Кемаль, Путь новой Турции, т. 1, М., 1929, Примечания, էջ 393։

¹² Testis, op. cit., p. 80.

¹³ Այդ մասին տե՛ս A. Mandelstam, La société des Nations et les Puissances devant le problème arménien. Paris, 1926, էջ 145—146։

տակ քրիստոնյա ժողովուրդներին: Եվ պատահական չպետք է համարել Ֆրանսիայի թուրքասիրական ավանդական քաղաքականությունը և, միաժամանակ, սուլթանական կառավարության և տիրապետող շրջանների առանձնահատուկ վերաբերմունքը Ֆրանսիայի նկատմամբ:

Հայտնի է, որ 400 տարվա ընթացքում, չհաշված Նապոլեոն Բոնապարտի շրջանում առաջ եկած կարճատև հակամարտությունը, Թուրքիայի ու Ֆրանսիայի միջև ոչ մի լուրջ բախում չի եղել և թուրք-ֆրանսիական հարաբերությունները ընթացել են բավականին խաղաղ, առանց քաղաքական խոր ճգնաժամերի, և այն բազմապիսի արտոնությունները, որոնցից օգտվում էին ֆրանսիացիները Օսմանյան կայսրությունում, վերջիններս ձեռք էին բերել ոչ թե ուժի, այլ հմուտ դիվանագիտության և թուրքասիրական ճկուն քաղաքականության շնորհիվ: 19-րդ դարի վերջին, օրինակ, այդ թուրքասիրական քաղաքականությունը այնպիսի բնույթ ընդունեց, որ ֆրանսիական կառավարությունը բացահայտորեն հանդես եկավ «արյունոտ սուլթան» Աբդուլ Համիդի հայասպան ոճիրների պաշտպանությամբ, իսկ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Գաբրիել Հանոտոն վաստակեց «Հանոտո փաշա» տիտղոսը: Ճիշտ է, առաջին համաշխարհային պատերազմում Ֆրանսիան և Թուրքիան հանդես եկան թշնամական բանակներում, սակայն վերջին հանգամանքը մեծ դեր չխաղաց նրանց հարաբերությունների վատթարացման գործում: Եվ պատերազմի ավարտից հետո ֆրանսիական ազդեցիկ շրջաններում հաճախակի էին լսվում ձայներ հօգուտ թուրք-ֆրանսիական «վաղեմի բարեկամության» վերականգնման ու ամրապնդման:

«Ֆրանսիան մահմեդականների կողմնակիցն է,— գրում էր հայտնի հրապարակախոս Ժակ Կյալեբրը: Նա այդպիսին է ըստ ավանդության, իր մեծահոգի ձգտումներով և հանուն իր շահերի պաշտպանության...

1914—1918 թթ. պատերազմը լիարիւեց այդ խորը և կայուն համերաշխության հիմքերը. Ֆրանսիան, առժամանակ շեղվելով դեպի անգլո-սաքսոնական փմպերիալիզմի ուղին, պարտավոր էր վերադառնալու Թուրքիայի հետ բարեկամությանը»¹⁴:

Ֆրանսիական հայտնի լրագրող Միշել Պայառեսը, որը Պոլսում ֆրանսերեն հրատարակվող «Բոսֆոր» թերթի խմբագիրն էր, իր

¹⁴ Ж. Каїзер, Европа и новая Турция, перевод с французского, М., 1925, стр. 55.

չրբում վերարտադրում է Ֆրանսիայի բարձրաստիճան գինվորականների հետ ունեցած զրույցները, որոնք արտացոլում էին Ֆրանսիայի թուրքասիրական շրջանների տրամադրությունները: Ահա նրանցից երկուսի բացահայտ խոստովանությունը.

«...Մենք պետք է լինենք ամբողջովին և բացարձակորեն թուրքասեր, ևս կասեի ավելին՝ թուրքամոլ: Ես սիրում եմ մահմեդականներին և ասում ուայային: Լինենք խոհեմ և գործարար... Երաշխավորենք այդ մարդկանց ազգային անկախությունն ու տերիտորիալ ամբողջականությունը և մենք կդառնանք նրանց ամենահավատարիմ ու ամենանվիրական ըկերակիցները: Ի՞նչ ենք փնտրում այստեղ: Մի պատվա՞ր ուսական ու բրիտանական իմպերիալիզմի դեմ: Մեր հեղինակության պահպանո՞ւմ: Մեր առևտրի ազատ զարգացո՞ւմ: Մեր լեզվի տարածո՞ւմ: Մեր եկեղեցիների ու դպրոցների ճանաչո՞ւմ: Մեր դրամական շահերի ապահովո՞ւմ: Մենք այդ բոլորը կունենանք ֆրանս-թուրքական համագործակցության շրնորհիվ...»¹⁵:

«Այս երկրում միայն թուրքերն են հետաքրքիր,—փորձում էր հավատացնել ֆրանսիացի մեկ ուրիշ գինվորական: Հենվենք նրանց վրա և մենք կվերադարձնենք գերմանացիների կողմից խլված մեր նախկին տեղը: Մենք կվարժեցնենք բանակը, կղեկավարենք վարչական գործը, դպրոցները, կվերահսկենք ֆինանսները: Մենք կներթափանցենք ու կհիմնվենք բոլոր ասպարեզներում: Մենք ոչ միայն կկայունացնենք մեր բարոյական ազդեցությունը, այլև հսկայական նյութական օգուտներ կբաղենք: Անատոլիան փր ընդերքում հեքիսթային հարստություններ է պարունակում, որոնք ոչ ոք չի հայտնարերել: Մենք հանքերի ու անտառների շահագործման կոնցեսսիաներ կստանանք, և լիովին կփոխհատուցենք այն կորուստները, որ մենք ունեցանք Արևելքում: Մենք կկառուցենք երկաթուղիներ, տրամվայի գծեր, նավահանգիստներ, ճանապարհներ՝ հանրային աշխատանքների մեջ ընտրելով այնպիսիները, որոնք առավել շահավետ են մեր արդյունաբերության համար: Մենք ո՞չ մի գնով չպետք է վտանգենք մեր շահերը՝ հայերի ու հույների գեղեցիկ աչքերի համար...»¹⁶:

Թուրքասիրական վաղեմի քաղաքականությունը վերադառնալու հարցը այդ տարիներին բազմիցս քննության առարկա է դարձել

¹⁵ Michel Paillard, Le Kémalisme devant les Alliés. Constantinople—Paris, 1922, p. 77—78.

¹⁶ Նույն տեղում, էջ 73:

Ֆրանսիական պառլամենտում: «Հաճախ են կրկնում, որ Ֆրանսիան մահմեդական տերութիւնն է: Եվ դա ճիշտ է,— հայտարարում էր քաղաքական հայտնի գործիչ Էդուարդ Սուլիեն: Ֆրանսիան աշխարհի շորրորդ մահմեդական պետութիւնն է: Բրիտանական կայսրութեան կազմում կան 92 միլիոն մահմեդականներ, Նիդեռլանդները հաշվում են 36 միլիոն, Զինաստանը՝ 30 միլիոն և Ֆրանսիան՝ 23 միլիոն: Նա առաջ է Ռուսաստանից, որտեղ կան 19,1 միլիոն մահմեդականներ, և Թուրքիայից, որի կազմում աշխարհի 240 միլիոն մահմեդականներից ընդգրկված են ընդամենը 14 միլիոն 600 հազարը: Ֆրանսիան մահմեդական ազգ է..., Ֆրանսիան մահմեդական մի մեծ երկիր է»¹⁷:

Նույն դիրքերից էր ելնում Ֆրանսիայի պրեմիեր-մինիստր Արիստիդ Բրիանը, երբ նա Ազգային ժողովի ամբիոնից կոչ էր անում վերադառնալ Ֆրանս-Թուրքական բարեկամությանը. «Ֆրանսիան մահմեդական տերութիւնն է, և նա պետք է վերականգնի իր հին ավանդական քաղաքականութիւնը Թուրքիայի հանդեպ...»¹⁸:

Ֆրանսիայի տիրապետող շրջանների «թրքասիրութեան համառ խորքը»¹⁹, որը, ինչպես ցույց տրվեց, խարսխվում էր նրանց աներկբա տնտեսական, դրամական ու բարոյական շահերի վրա Թուրքիայում, կարևորագույն գործոններից մեկը դարձավ համաշխարհային պատերազմի ավարտից շատ լանցած, արդեն 1919 թ. վերջին սկիզբ առած Ֆրանսիական Թուրքանպաստ անջատ քաղաքականութեան թեև Ֆրանսիան միշտ էլ հանդիպում էր իր հզոր դաշնակցի, իսկ իրականում, ախոյանի՝ Անգլիայի դիմադրութեանը:

Հարցը այն է, որ Առաջին համաշխարհային պատերազմի հաղթական վախճանից հետո Ֆրանսիային առավել զբաղեցնում էին եվրոպական գործերը՝ պարտված գերմանացիներից պատերազմական տուգանքը ստանալու հարցը, Սաարի ավազանի հարցը, Հռենոսի հարցը և այլն: Սրանց համեմատութեամբ մերձավորարեւելյան հարցը ստորադաս դիրք էր գրավում: Բացի այդ, Ֆրանսիան, իր ռազմական բոլոր կարողութիւնները կենտրոնացնելով կայգերական Գերմանիայի դեմ, փաստորեն պատերազմ չէր մղել Թուր-

¹⁷ Fené Puaux, La question d'Orient devant le Parlement. Paris, 1922, p. 17—18.

¹⁸ Տե՛ս A. Mandelstam, op. cit., p. 195, նաև „L'Asie française“, № 195, septembre-octobre, 1921, էջ 380—384:

¹⁹ Էդուարդ Էլզե, Եղմարտութիւնը քեմալական Թուրքիոյ մասին, Փարիզ, 1926, էջ 16:

քիայի դեմ՝ մերձավորարևելյան ճակատներում, և համաշխարհային պատերազմի վերջին նա Մերձավոր Արևելքում շնչին թվով զորք ունենալու՝ Անգլիայի համեմատ, իսկ Միջերկրականի ջրերում ու նեղուցներում իշխում էր անգլիական նավատորմը: 1919 թ. նոյեմբերին կեսնոտում Անգլիան ուներ 34 հետևակային գումարտակ, 15 կես հեծյալ գունդ, 13 հրետանային մարտկոց և ինժեներական զորքերի հինգ և կես գումարտակ:

Ֆրանսիական զորքերի ընդհանուր թիվը այդ նույն շրջանում կազմում էր 13 հետևակային գումարտակ, հեծյալ 3 գունդ և հրետանային 4 մարտկոց²⁰:

Նշված երկու գլխավոր պատճառներով, այն է՝ եվրոպական գործերում Անգլիայի աշակցությունը ստանալու անհրաժեշտությունը և Մերձավոր Արևելքում անգլիական զորքերի բացահայտ գերակշռությամբ պետք է բացատրել այն փաստը, որ Ֆրանսիան հաճախ ստիպված էր լինում նկատելի զիջումներ անել Անգլիային, ի վնաս իր շահերի, համաձայնվելով վերանայել պատերազմի տարիներին կնքված գաղտնի պայմանագրերը Թուրքիայի բաժանման վերաբերյալ և նույնիսկ մասնակցություն ունենալ Թուրքիայի դեմ ձեռնարկված ռազմական գործողություններին:

Ինչպես ասվեց, փ տարբերությունն Անգլիայի, Ֆրանսիան ամենևին շահագրգռված չէր Օսմանյան կայսրության փլուզմամբ և թուրքական պետականության վերացմամբ, որովհետև վերջին պարագայում նա կզրկվեր իր դրամական ու տնտեսական արտոնություններից: «Միջերկրական ծովի շրջանում մեր ազգային բոլոր շահերից ես չգիտեմ առավել կարևորը, քան Օսմանյան կայսրության տերիտորիալ անձեռնմխելիության պահպանումը»²¹, — գրում էր հայտնի արևելագետ Վ. Բերարը:

«Թուրքիայի մասնատումը, — գրում էր հայտնի լրագրող է. Բերնին, — հավասարազոր է Մերձավոր Արևելքում ֆրանսիական ազդեցության ունշացմանը»²²:

Եվ եթե Ֆրանսիան, այնուհանդերձ, մասնակցում էր Օսմանյան կայսրության կազմի մեջ մտնող երկրների ու հողամասերի բաժանմանը, ապա սոսկ այն պատճառով, որ այդ բաժանումն անխուսափելի էր դառնում և նա, որպես իմպերիալիստական և գաղութային խոշոր տերություն, չէր կարող իր «բաժինը» չպահանջել: Իսկ այդ

²⁰ Testis, op. cit., p. 19.

²¹ *Տէս Կեստիս Կեմալ, Путь новой Турции, т. I, Предисловие, էջ XI,*

²² „L'Europe nouvelle“, № 9, 28 février 1920, p. 342.

«բաժինը» պահանջելիս Ֆրանսիան հանդիպում էր առավել հզոր իմպերիալիստական տերության՝ Անգլիայի դիմադրությանը, որը համաշխարհային պատերազմի ավարտից հետո, իր հզորությունից ու դիրքից օգտվելով, իր նախկին դաշնակցին հասկացնել էր տալիս, որ ինքը մտադիր է սրբությամբ պահպանել պատերազմի տարիներին կնքված զաղտնի պայմանագրերի տառն ու ոգին: Խախտումների սկիզբը դրվեց պատերազմից անմիջապես հետո, երբ Անգլիան, առաջինը զնահատելով Մոսուլի շրջանի ահռելի պոտենցիալ հնարավորությունները, 1918 թ. նոյեմբերի 2-ին իր զորքերը մտցրեց այդ շրջանը, որը 1916 թ. կնքված Սայքս-Պիկոյի զաղտնի պայմանագրով կազմելու էր Ֆրանսիայի ազդեցության գոտին: Իսկ դեկտեմբերին Լոյդ-Ջորջը հայտարարեց Կլեմանսոյին, որ Սայքս-Պիկոյի պայմանագիրը չի կարող ուժի մեջ մնալ, քանի որ նրա «մասնակիցներից» մեկը՝ Ռուսաստանը դուրս է եկել հաշվից: Ու թեև Կլեմանսոն պնդում էր, որ այդ պայմանագիրը կնքվել է միայն Անգլիայի ու Ֆրանսիայի միջև, ուստի այն ուժի մեջ է, ի վերջո նա, կատարված փաստից ելնելով, ստիպված էր հօգուտ Անգլիայի հրաժարվել Մոսուլի վիլայեթից և Պաղեստինի կառավարմանը մասնակցելուց: Հետագայում, Կլեմանսոն, պաշտպանվելով այն հակառակորդներից, որոնք իրեն մեղադրում էին Մոսուլի նման հարուստ շրջանը ձեռքից բաց թողնելու համար, արդարանում էր ասելով.

«Այո, ես զիջեցի Մոսուլը, բայց նրանք մոռանում են, որ ես այն օգտագործեցի որպես խայծ՝ Կիլիկիան ստանալու համար, թեև մեր շատ լավ դաշնակիցներից ոմանք չէին ուզում, որ այն մեղ տրվի... Կիլիկիան եղել է և վերստին կարող է շատ հաճելի երկիր դառնալ... Կիլիկիան ու Ալեքսանդրիտը այնքան էլ վատ բաներ չեն»²³:

Սակայն Ֆրանսիային խոստացված տերիտորիաներն էլ Անգլիան հեշտությամբ չէր զիջում նրան: Հետպատերազմյան տարիներին հրապարակված անգլիական պաշտոնական փաստաթղթերից

²³ Տե՛ս Мустафа Кемаль, Путь новой Турции, т. III, М., 1933. Примечания, էջ 291: Այս հայտարարությունը, իհարկե, չէր արտացոլում իրական պատկերը: Տակավին Փարիզի հաշտության համաժողովում, Լոյդ-Ջորջի հետ ունեցած երկու հանդիպումների ժամանակ (1919 թ. մայիսի 21—22-ին) Կլեմանսոն խոստովանել էր, որ ինքը անգիտանալով էր համաձայնվել զիջել Մոսուլի վիլայեթը. «Եթե ես պատկերացում ունենայի Մոսուլի և Միջագետքի կարևորության մասին, ես չէի համաձայնվի դրանք զիջել ձեզ: Եթե դուք ինձ ասեիք, որ Միջագետքի դիջումը կհանգեցնի հակապական տերիտորիայի կորուստին, ես կմերժեի Ձեզ այդ հարցում: Տե՛ս Ж. Капзер, Европа и новая Турция, էջ 25:

երևում է, թե ինչպիսի սուր կամ «խուլ» պայքար է տեղի ունեցել այդ հարցում Անտանտի զույգ դաշնակիցների միջև: Այսպես, Փարիզի հաշտության համաժողովում, հինգ մեծ տերութունների պատվիրակությունների ղեկավարների հանդիպման ժամանակ (1919 թ. հուլիսի 18-ին) Կլեմանսոն բողոքում էր այն բանի դեմ, որ զորավար Ալենորին, առաջնորդելով իր կառավարությունից ստացված հրահանգներով, «հանդես է գալիս Թուրքիայում, որպես անգլիական ղինվորական, և ոչ թե որպես դաշնակից զորքերի ղեկավար հրամանատար, նրա զործողություններն իրենց հետևանքներով ուղղված են ֆրանսիական շահերի դեմ... Նա հրաժարվում է թույլ տալ ֆրանսիական զորքերին մտնել Սիրիա...»²⁴:

Իսկ Սիրիան ֆրանսիական իմպերիալիստների ծրագրերում զրավում էր առավել կարևոր տեղ, քան Կիլիկիան: Ժիշտ է, իր տընտեսական նշանակությամբ և զարգացման հեռանկարներով Սիրիան զիջում էր Կիլիկիային, սակայն նա չափազանց կարևոր ստրատեգիական դիրք էր զրավում, գտնվելով եվրոպական խոշոր տերութուններին իրենց արևելյան գաղութներին կապող ճանապարհների կենտրոնում: Միաժամանակ, Սիրիան իր աշխարհագրական դիրքով միջնորդ առևտրի դեր էր խաղում Եգիպտոսի, Արաբիայի, Միջագետքի ու Փոքր Ասիայի միջև: Ֆրանսիան տակավին 19-րդ դարի 40-ական թվականներից առանձնահատուկ շահեր էր ձեռք բերել Սիրիայում: Ֆրանսիական ներթափանցման կարևորագույն միջոցներից մեկը երկաթուղային շինարարությունն էր: Համաշխարհային պատերազմի նախօրյակին Ֆրանսիան իր ձեռքում էր պահում 788 կմ երկարությամբ երկաթուղային ցանց՝ երկրի բոլոր երկաթուղիների մոտ 40 տոկոսը: Ֆինանսավորում էր այդ երկաթուղիները Փարիզի հայտնի «Régie Générale des chemins de fer» ընկերությունը: Ֆրանսիական երկաթգծերը իրար էին կապում Սիրիայի զբլխավոր կենտրոնները՝ Հալեպը, Համան, Հոմսը և Դամասկոսը՝ Բեյրութում ու Տրիպոլիում դուրս գալով դեպի ծով: Այդ գծերը կարևոր էին նաև այն տեսակետից, որ նրանք Բաղդադի երկաթուղու մի ճյուղը կապում էին Եգիպտոսի երկաթուղիների հետ: Ֆրանսիայի շահագրգռվածությունն այս հարցում այնքան մեծ էր, որ նա պատերազմի նախօրյակին, 1914 թ. փետրվարին, Գերմանիայի հետ կնքեց պայմանագիր, որով նա հրաժարվում էր երկաթուղային շինարարությունից Կիլիկիայում, ինչպես նաև Deutsche Bank-ին վա-

²⁴ Documents on British Foreign Policy 1919—1939, First series, volume 1. 1919. London, 1947, p. 134.

ճառեց Բաղդադի երկաթուղու իր ակցիաները (հիմնական կապիտալի 30 տոկոսը) միայն այն բանի դիմաց, որ Գերմանիան հրաժարվեր երկաթուղային շինարարությունից Սիրիայում²⁵:

Մեծ էր նաև Ֆրանսիայի քաղաքական ու մշակութային ազդեցությունը Սիրիայում:

Եվ հաճախ, պատերազմի ավարտից հետո, երբ թվում էր, որ ֆրանսիական կապիտալիստներին կհաջողվի առավել ամրապնդել իրենց տնտեսական ու քաղաքական դիրքերը այդ երկրում, անգլիական իմպերիալիզմն այստեղ էլ հնարավոր բոլոր միջոցներով պայքարում էր իր դաշնակից-մրցակցի անմիջական շահերի դեմ:

Սակայն անգլո-ֆրանսիական իմպերիալիստական հակամարտությունը չէր սահմանափակվում «Օսմանյան ժառանգության» շուրջը ծավալված կատաղի պայքարը: Ցարական Ռուսաստանի, Գերմանիայի ու Ավստրո-Հունգարիայի փոխարեն այդ պայքարի մեջ պատերազմից հետո ներգրավվել էին Ամերիկայի Միացյալ Նահանգները, որոնք նույնպես իրենց քաղաքականությունը լուրջ անհանգստություն էին պատճառում ֆրանսիական կապիտալի շահերին: ԱՄՆ-ի իմպերիալիստական շրջանների կողմից ստեղծված Քինգի-Կրեյնի հանձնաժողովը, 1919 թ. հունիս-հուլիսին պաշտոնապես հետազոտելով Սիրիան, Փարիզի հաշտության համաժողովին ներկայացրած իր զեկուցագրում առաջարկում էր Ստամբուլի ու Անատոլիայի (Կիլիկիայի հետ միասին) հետ մեկտեղ Սիրիայի մանդատը ևս հանձնել Միացյալ Նահանգներին:

Ֆրանսիական շահերի դեմ ուղղված այս ծրագրերը մեծ դժգոհություն առաջացրին Ֆրանսիայի գաղութատիրական քաղաքականության պաշտպանների մոտ և նրանց լսափողը հանդիսացող մամուլի էջերում: Հայտնի լրագրող Պերտինաքսը «Echo de Paris» թերթում պահանջում էր, որ «Ֆրանսիան իր ավանդական ազդեցությունը հնարավորին չափ պահպանելու համար իր ջանքերը կենտրոնացնի Սիրիայի ու Կիլիկիայի վրա, որտեղ ֆրանսիական իրավունքները ճանաչվել են Անգլիայի հետ 1916 թ. կնքված պայմանագրով»²⁶:

Կլեմանսոյի կառավարության կողմից թույլ տրված «զիջումները» քննադատությամբ հանդես էին գալիս մի շարք այլ երևելի

²⁵ «Раздел Азиатской Турции», Предисловие, стр. 19—20.

²⁶ «Sé» Documents on British Foreign Policy 1919—1939, First series, volume IV, 1919. London, 1952, p. 309.

լրագրողներ ու քաղաքական մեկնաբաններ՝ Օգյուստ Գովենը, Շ. Դ. Սավարին և ուրիշներ: «Կապահպանե՞նք արդյոք մեր ժառանգությունն Արևելքում» խորագրով հոգովածում Սավարին գրում էր. «Ֆրանսիան, որն այնքան նշանակալից նյութական ու բարոյական շահեր ունի Արևելքում, և որի լեզուն օգտագործվում էր ամենուրեք՝ Օսմանյան կայսրությունում, շուտով կիմանա չափն այն կորուստների, որ նա ունեցել է՝ մնալով անտարբեր այն դեպքում, երբ մյուսները գործել են խելքով ու մեթոդով... Ֆրանսիական փորձառու հասարակական կարծիքը, — զգուշացնում էր նա, — չի հրաժարվի այն ամենից ինչը մասն է կազմել մեր փառավոր ու թանկագին ժառանգության: Ֆրանսիան չի բավարարվի Սիրիայի ժովեզրյա մասով: Նա չի ընդունում ընկույզն առանց կճեպի. նա ուզում է Դամասկոսն ու Հալեպը»²⁷:

Սակայն հեշտ չէր «կճեպով ընկույզ» ստանալ Անգլիայի նման մի ախույանից, թեև Ֆրանսիան համառորեն շարունակում էր պայքարը: Իրավացի է պրոֆ. Շ. Մ. Լեմինը, Մերձավոր Արևելքի բաժանման համար մղված անգլո-ֆրանսիական պայքարը դասելով «հետպատերազմյան պատմության ամենակեղտոտ էջերի» շարքը²⁸: Այդ պայքարում բրիտանական իմպերիալիզմի հետապնդած հիմնական նպատակն էր Ֆրանսիային կանգնեցնել կատարված փաստի առջև՝ նեղուցների գոտում և Անատոլիայում: Այդ էր պատճառը, որ անգլիական ներկայացուցիչները Փարիզի հաշտության համաժողովում ամեն կերպ ձգձգում էին թուրքական հարցի քննարկումը: «Շաբաթներն ու ամիսների ընթացքում, — գրում էր Անգլիայի արտաքին գործերի մինիստրության աշխատակից լորդ Ն. Պերսին, — մենք արգելակում էինք թուրքական հարցի ոչ միայն լուծումը, այլև նրա քննարկումը Հաշտության համաժողովում: Թեև այդ հարցը Համաժողովում քննարկվող հարցերից առավել ինտենսիվ մշակվածն էր, դա միակն էր, որի մասին բրիտանական պատվիրակությանը նույնիսկ արգելված էր հիշատակել Համաժողովի առաջին 4—5 ամիսներին...»²⁹:

Ֆրանսիական դիվանագիտությունը, իր հերթին, 1919 թ. վերջին առաջին լուրջ փորձն արեց իր «թուրքական գործերը» կարգա-

²⁷ „Démocratie nouvelle“, 15 avril 1919.

²⁸ И. М. Лемин, Внешняя политика Великобритании от Версаля до Локарно, 1919—1925. М., 1947, стр. 184.

²⁹ Տե՛ս Մустаֆա Կեմալ, Путь новой Турции, т. 1, Предисловие, էջ XLVII.

վորելու Անգլիայից անշատ՝ համաձայնության գալով Սըվասում ստեղծված ներկայացուցչական կոմիտեի հետ: Այդ նպատակով Սիրիայում և Կիլիկիայում ֆրանսիական զերագույն կոմիսար Ժորժ Պիկոն 1919 թ. դեկտեմբերին երկու սպանների ուղեկցությամբ ժամանեց Սըվաս և հանդիպումներ ունեցավ հիշյալ կոմիտեի նախագահ Մուստաֆա Քեմալի հետ: Պիկոյի ուղևորության նպատակներից մեկն էր «հենց ազգայնականների պարագլուխ Մուստաֆա Քեմալ փաշայի բերանից ստույգ տեղեկություն ստանալ Կիլիկիայի, Փոքր Հայքի ու Քուրդիստանի նկատմամբ նրանց ունեցած հավանությունների մասին»³⁰:

Ֆրանսիական դիվանագետի այցը Քեմալին ժամանակին մեծ աղմուկ հանեց եվրոպական մամուլում: Անգլիական թերթերը մեղադրում էին «գաշնակից Ֆրանսիային» նրա ուխտադրուժ, անշատ քայլերի համար, իսկ ֆրանսիական մամուլը թննարկման առարկա էր դարձրել այն հարցը, թե արդյո՞ք Ժորժ Պիկոն իր անձնական նախաձեռնությամբ էր կատարել այդ ուղևորությունը, թե՞ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրության հանձնարարությամբ: Այս հարցին հակասական և իրարամերժ պատասխաններ են տալիս նաև ֆրանսիական պատմաբաններն ու նախկին զինվորական գործիչները: Այսպես, վերը հիշատակված Միշել Պայառեսը անուղղակի ձևով գտնում է, որ Ժորժ Պիկոյի ուղևորությունը Սըվաս համաձայնեցված չէր Քեմալի (Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրության) հետ, որովհետև Կոստանդնուպոլսում ֆրանսիական զերագույն կոմիսար Դեֆրանսը հավանություն չէր տվել այդ քայլին, դիտելով այն, որպես մի ձեռնարկում, որը «կարող էր ֆրանսիացիներին արատավորել սուլթանի աչքում, ինչպես նաև դուր չգալ անգլիացիներին, որոնք հայտարարել էին, որ ճանաչում են միայն կայսերական կառավարությունը»³¹:

Ըստ էության նույն կարծիքն է հայտնում զննապետ Բրեմոնը, շեշտելով միայն այն հանգամանքը, որ Պիկոյի տեսակցությունը Քեմալի հետ «հավանության չարժանացավ ո՛չ Բեյրութում, ո՛չ էլ Կոստանդնուպոլսում»³²:

Ֆրանսիական պատմաբան Ժան Պիշոնը ևս գրեթե նման մի

³⁰ Compte R. de Gontaut Byron, Comment la France s'est installée en Syrie (1918—1919). Paris, 1923, p. 333.

³¹ Michel Paillarès, op. cit., p. 108—109.

³² S. Brémont, La Cilicie en 1919—1920. Paris, 1921, p. 36.

դնահատական է տալիս. «Ֆրանսուա Ժորժ Պիկոն, որին Բելյուսթում փոխարինել էր զորավար Գուրոն, ցանկացավ փորձ անել բանակցելու քեմալականների հետ՝ նա ուղևորվեց Սըվաս և այնտեղ դեկտեմբերի 5-ին ու 6-ին հանդիպումներ ունեցավ Մուստաֆա Քեմալի հետ»³³։ Սակայն, հեղինակը, փաստորեն հերքում է իր վերոհիշյալ դնահատականը, Պիկոյի բանակցությունները համարելով «մի պատասխան Կոստանդնուպոլսի օրինական կառավարության հետ անգլիացիների կնքած սեպտեմբերի 12-ի գաղտնի համաձայնագրին և այն զրուցներին, որ ամերիկյան զենքերալ Հարրորդը ունեցել էր Մուստաֆա Քեմալի հետ Սըվասում սեպտեմբերի 20-ին»³⁴։ Նման պարագայում, հասկանալի է, Ժորժ Պիկոն չէր կարող գործել միանշանակ ինքնուրույն, առանց իր քայլերը կառավարության հետ համաձայնեցնելու, ինչպես որ անձնական նախաձեռնության արդյունք չէին վերահիշյալ Հարրորդի բանակցությունները և անգլիական մարշալ Ալենբրիի բանակցությունները սուլթանական կառավարության հետ։

Ֆրանսիական հեղինակներից Գոնտո-Բիրոնը ևս Սըվասի բանակցությունները կապում էր Պիկոյի անձնական նախաձեռնության հետ, այն տարբերությամբ, սակայն, որ նա մի փոքր այլ մեկնաբանություն է տալիս նրա հետապնդած նպատակներին, գրելով, որ Ժորժ Պիկոն մտադրություն ուներ Ֆրանսիական կառավարությանը պատկերացում տալ քեմալականների ծրագրերի մասին և ջանալ «կնքել մի համաձայնագիր, որը վերջ կտար սիրիական հուլումներին»³⁵։

Անգլիական հեղինակներից այս հարցին անդրադարձել է լորդ Կինրոսը, որը ի տարբերություն Ֆրանսիական հեղինակների, մատնանշում է այն հանգամանքը, որ Ժորժ Պիկոն Քեմալին ներկայանում է, որպես «Ֆրանսիական կառավարության ներկայացուցիչ», և որ «վերջինս նրան ընդունել է, որպես հենց այդպիսին», և նրանք հանգամանորեն քննարկել են իրենց համատեղ ցանկությունը՝ վերադառնալ Ֆրանս-թուրքական բարեկամությանը³⁶։

Պիկոյի ուղևորության շարժառիթներին և Քեմալի հետ ունեցած նրա հանդիպումներին առավել հանգամանորեն անդրադարձել

³³ Jean Pichon, Le partage du Proche-Orient. Paris, 1938, p. 203.

³⁴ Նույն տեղում։

³⁵ Compte K. de Gontaut-Byron, op. cit., p. 333.

³⁶ Lord Kinross, Atatürk. The rebirth of a nation. London, 1965, p. 203.

է թուրք հայտնի քաղաքական գործիչ, Մոսկվայում քեմալական կառավարության առաջին դեսպան Ալի Ֆուաթ փաշան (Զեքեսոյը)՝ «Ազգային-ազատագրական պայքարի հուշերում»։ Վերջինիս բերած փաստերը վկայում են, որ Մուստաֆա Քեմալը և իր համախոհները նախօրոք տեղյակ են եղել Պիկոյի Սըվաս գալու մտադրությանը։ Այդ ժամանակ Կեսարիայում գտնվող Ալի Ֆուաթ փաշան Սըվասից՝ ներկայացուցչական կոմիտեից, ստանում է մի հեռագիր, որտեղ ասված էր, որ Սիրիայի Ֆրանսիական ներկայացուցիչ Ժորժ Պիկոն Բեքիր Սամի բեյի³⁷ միջոցով ցանկութուն է հայտնել շփման մեջ մտնել ներկայացուցչական խորհրդի հետ և վերջինիս կողմից հավաստիանալով, որ Սըվասում իրեն գահակալության կնդունեն, ինքնաշարժով մեկնել է Սըվաս։ Քննդվում է,— ասվում էր հիշյալ հեռագրում,— դուրին դարձնել նրա ուղևորությունը և հնարավորության դեպքում իմանալ ուղևորության պատճառը և այդ մասին տեղեկացնել ներկայացուցչական խորհրդին՝ նրա ժամանելուց առաջ»³⁸։

Դեկտեմբերի 6-ին³⁹ Պիկոն հասնում է Կեսարիա և անմիջապես հանդիպում ու «անկեղծ զրույցներ» ունենում Ալի Ֆուաթ փաշայի հետ։ Պիկոն վերջինիս հայտնում է, որ Ֆրանսիայում շուտով տեղի է ունենալու միևնույնիստների կազմի փոփոխություն, որի հետևանքով պրեմիեր մինիստրի պաշտոնը գրավելու է Բրիանը և որ «ամեն ինչ փոխվելու է»։ Ապա ավելացնում է. «Ենչպես պարոն Բրիանի, այնպես էլ Ֆրանսիական ազգի քաղաքականությունն է՝ հնարավորություն ստեղծել, որպեսզի Միջին Արևելքում, թուրքական մեծամասնություն կազմող հատվածում, հիմնվի ուժեղ և անկախ թուրքական պետություն»⁴⁰։ Այնուհետև, Ֆրանսիական դիվանագետը հավաստիացնում է Ալի Ֆուաթին, որ այդ նպատակի համար Ֆրանսիան կձեռնարկի բոլոր հնարավոր միջոցները։ Միաժամանակ Պիկոն հույս է հայտնում, որ Կիլիկիայում սկսված

³⁷ Բեքիր Սամի-բեյը Անկարայի կառավարության արտաքին գործերի մինիստրն էր։ Մինչ այդ նա մի քանի տարի Բեյրութի կռահակալն էր և հենց այնտեղ էր մտերմացել Ֆրանսիական հյուպատոս Ժորժ Պիկոյի հետ։ *Sh'ou Ali Fuat Cebesoy, Millet mücadele hatıraları. İstanbul, 1953, p. 268.*

³⁸ Նույն տեղում։

³⁹ Ֆրանսիական հեղինակների տեղեկության համաձայն, Ժորժ Պիկոն արդեն դեկտեմբերի 5-ին Սըվասում էր։ *Sh'ou Compte R. de Gontaut-Byron, Զեք. աշխ., էջ 338, Jean Pichon, Զեք. աշխ., էջ 203:*

⁴⁰ *Ali Fuat Cebesoy, op. cit., p. 268—269.*

արյունահեղ ընդհարումները կկասեցվեն, քանի որ այդ են պահանջում երկու կողմերի շահերը: Ճնշակա թուրքիայի ու Ֆրանսիայի ապագա քաղաքականությունը,— հայտարարում է նա,— չպետք է վտանգի ենթարկվի նման շարժումների պատճառով⁴¹:

Պիկոյի հետ ունեցած իր զրույցների ամփոփումը Ալի Ֆուաթը ծածկադրով հաղորդում է Սըվաս՝ ներկայացուցչական խորհրդին⁴²:

Ֆրանսիական դիվանագետի հայտնած կարծիքներից դժվար չէ հղրակացնել, որ դրանք մասնավոր անձանց հայտարարություններ չէին, այլ այս կամ այն կերպ արտացոլում էին ֆրանսիական ղեկավար շրջանների ձգտումը՝ անջատ համաձայնության հասնել թուրքիայում իրական իշխանությամբ օժտված միակ կառավարության՝ բնալականների կողմից գլխավորվող ներկայացուցչական խորհրդի հետ: Այդ բանը հաստատեցին նաև Պիկոյի հանդիպումները անձամբ Մուստաֆա Քեմալի հետ:

Ինչպես տեսանք, Քեմալը, դիվանագիտական հմտություն հանդես բերելով, նախապես տեղեկացել էր ֆրանսիական ներկայացուցչի հետամտած նպատակներին և նա վերջինիս Սըվասում դիմավորեց լկազմ-պատրաստ: Քեմալի ու Պիկոյի միջև տեղի ունեցած զրույցներին, որոնք տեեցին երկու օր⁴³, ներկա էին Բեքիր Սամի բեյը, նախկին ծովային մինիստր Հուսեյն Ռուսթեմ բեյը և ԱՄՆ-ում թուրքական նախկին դեսպան Ահմեթ Ռուստեմ բեյը⁴⁴: Ալի Ֆուաթ փաշան, վկայակոչելով հիշյալ գործիչների պատմածները, հետևյալ հետաքրքիր մանրամասներն է հաղորդում այդ հանդիպման մասին:

Ժամանելով Սըվաս, Ժորժ Պիկոն ներկայացուցչական խորհրդին թողնում է իր այցեւոմմաը, որն անմիջապես հանձնվում է Քեմալին: Վերջինս, տեսնելով, որ այցեւոմմաի վրա գրված է՝ «Ֆրանսիական կառավարության ներկայացուցիչ Սիրիայում և Հայաստանում» լուր է ուղարկում Պիկոյին, որ ինքը չի կարող ընդունել մի անձնավորության, որը եկել է, որպես Ֆրանսիայի հայաստանյան ներկայացուցիչ: Տեղեկանալով այդ մասին, Պիկոն անձամբ գնով է ներկայացուցչական խորհրդի շենքը և հայտնում, որ ինքը հան-

⁴¹ Նույն տեղում, էջ 269:

⁴² Նույն տեղում:

⁴³ Paul du Vèou, La passion de la Cilicie. 1919—1922, Paris, 1954, p. 107; Jean Pichon, op. cit., p. 203.

⁴⁴ Ali Fuat Cebesoy, op. cit., p. 269.

դիսանում է Երևանում հաստատված հայկական կառավարության ներկայացուցիչը, և «որևէ կապ կամ հարաբերություն չունի այն պետության հետ, որը մտադրվում են հիմնել այդ կառավարության սահմաններից դուրս»⁴⁵։ Միայն Պիկոյի լիազորությունների այս «ճշգրտումից» հետո է, որ Մուստաֆա Քեմալը ընդունում է նրան։

Հանդիպման սկզբում Պիկոն Քեմալին հայտնում Ալի Ֆուաթ փաշայի հետ զրույցի ժամանակ արտահայտած այն կարծիքը, որ շուտով Ֆրանսիայի կառավարության կազմում տեղի կունենան փոփոխություններ, մասնավորապես, նոր կառավարությունը կզլխավորի Բրիտանը, և որ «նոր կառավարության քաղաքականությունը ամբողջովին կպաշտպանի թուրքական ազգային քաղաքականությունը»⁴⁶։

Քեմալ-Պիկո հանդիպման, նրանց երկօրյա խոսակցությունների մանրամասները մեզ չեն հասել, սակայն Ֆրանսիական պատմաբան Գոնտո-Բիրոնը նշում է, որ «Ֆրանսիային ու Թուրքիային հետաքրքրող բոլոր հիմնական հարցերը քննարկվել և որոշվել են»⁴⁷։ Նրանց կողմից, իսկ Ալի Ֆուաթը տեղեկացնում է, որ «երկար լիճաբանություններից հետո փաշայի (Քեմալի—Ռ. Ս.) և Պիկոյի միջև գոյացել է կատարյալ համաձայնություն թուրքական, արաբական և հայկական հարցերի շուրջը»⁴⁸։

Առավել հանգամանալից քննարկման առարկա է դարձել Կիլիկիայի սահմանների հարցը։ Քեմալը հենց սկզբից վճռականորեն հայտարարել է, որ Թուրքիան ճանաչելու է Մուղրոսի զինադաշտով գծված սահմանները միայն, հետևաբար չի ճանաչելու Կիլիկիայի այն հատուկ գրությունը, որ հատուկ հոգվածով համաձայնվել էին նախատեսել օսմանյան պատվիրակները՝ անգլիական ծովակալ Կալտորպի թելադրանքով։ «Եթե օսմանյան կառավարությունները, ամբողջովին կախման մեջ գտնվելով Անգլիայից, չեն քողոքել Կիլիկիայի գրավման դեմ,— հայտարարել է Մ. Քեմալը,— ազգայնականները, դրան հակառակ, երբեք չեն դադարել դրա դեմ քողոքելուց»։ Նա ասել է Պիկոյին, որ ազգայնականները կհամա-

⁴⁵ Ali Fuat Cebesoy, op. cit., p. 269.

⁴⁶ Նույն տեղում։

⁴⁷ Comte R. de Gontaut-Byron, op. cit., p. 338.

⁴⁸ Ali Fuat Cebesoy, op. cit., p. 269—270.

ձայնովին «դիշել» միայն Զեդիբեն, Իրաքը և Սիրիան, բայց երբեք չեն հրաժարվի Կիլիկիայից՝ «իրենց մարմնի մի մասից»⁴⁹։

«Սըվասում ունեցած զրույցների ժամանակ,— գրում էր վերջ հիշատակված ֆրանսիական լրագրող է. Բերնին,— Պիկոյին մատնանշվեցին այն լուրջ դժվարությունները, որոնց մենք կհանդիպեինք, եթե ցանկանայինք հետևել մեր նախկին վարվելակերպին»⁵⁰։

Մյուս հարցը, որ վիճարանությունների տեղիք է տվել հիշյալ բանակցությունների ժամանակ, դա ազգային փոքրամասնությունների հարցն էր։ Մուստաֆա Քեմալը համառորեն պաշտպանել է այդ առթիվ էրզրումի համաժողովի կողմից ընդունված որոշումները, մինչդեռ Ժորժ Պիկոն փոքրամասնությունների անվտանգության ու ապահովության նոր երաշխիքներ է պահանջել՝ վկայակոչելով Կիլիկիայի բնակչության, հատկապես փոքրամասնությունների հանդեպ Ֆրանսիայի պարտավորությունները⁵¹։ Այդ հարցի ըննարկման ժամանակ Քեմալը վերստին հանդես բերելով դիվանագիտական հմտություն, կարողանում է շփոթության մեջ գցել ֆրանսիացի դիվանագետին՝ նրա մոտ ստեղծելով պատրանք «թուրքական ազգային բանակների» առկայության մասին։ Հավատարիվ երևակայական այդ բանակների գոյությանը, Պիկոն խնդրում է Քեմալին «անհապաղ հրամայել դեպի Կիլիկիա առաջացող ազգային բանակներին կանգ առնել իրենց գտնված վայրում»։ Պիկոյի այս պահանջը Քեմալը մերժում է այնպիսի մի տեսքով, որ նույնիսկ նրա ղինակիցները (Ռաուֆ բեյը, Բեքիր Սամի բեյը, Ահմեդ Ռուստեմ բեյը) մի պահ հավատում են այդ բանին՝ անգամ զարմանում Քեմալի դադտնապահության վրա, որն իրենցից թաքցրել էր «թուրքական ազգային բանակների» առկայության փաստը⁵²։

Քեմալ-Պիկո տեսակցության ժամանակ մշակվում է համաձայնության մի նախագիծ, որով Ֆրանսիան.

1. «Վերադարձնում էր Կիլիկիան Թուրքիային, որը, սակայն, հանաչում էր Ֆրանսիայի իրավունքը տեղական վարչության և փոքրամասնությունների հովանավորության հարցերում։

⁴⁹ Comte R. de Gontaut-Byron, op. cit., p. 338. Այս առիթով Ռաուֆ-բեյը հայտարարում է, որ «Բարձր Պաշ կողմից ճանաչված երեսնյան հանրապետությունը բավարար մի հանգրվան է հայերի համար»։ Տե՛ս նույն տեղում։

⁵⁰ „L'Europe Nouvelle“, № 9, 28 février 1920, p. 342.

⁵¹ Comte R. de Gontaut-Byron, op. cit., p. 338—339.

⁵² A. I. Fuat-Cebesoy, op. cit., p. 270; Lord Kinross, op. cit., p. 203.

2. Երաշխավորում էր Թուրքիայի անբաժանելիութունը՝ ընդդեմ Անգլիայի, Հունաստանի և Իտալիայի»⁵³:

Ամփոփելով Քեմալի ու Պիկոյի հանդիպման արդյունքները, պետք է ասել, որ թեև Ֆրանսիական դիվանագետը իր կառավարության կողմից լիազորված չէր պաշտոնական բանակցություններ վարելու, սակայն այդ հանդիպումը իր դրական հետևանքներն ունեցավ քեմալականների համար, և բացասական հետևանքներ Ֆրանսիայի քաղաքականության, ավելի ճիշտ՝ Կիլիկիայի հայ ազգաբնակչության համար: Ֆրանսիական պատմաբանների մեծ մասը, Պիկոյի ուղևորությանը մոտենալով բացառապես Ֆրանսիայի շահերը Թուրքիայում ապահովելու տեսանկյունից, դրական գնահատական է տալիս դրան և ամփոսանքով նշում, որ համաձայնություն չկայացավ: «Պայմանագրի նախագիծը, — գրում է Ժակ Կայդերը, — Ֆրանսիային ապահովում էր զգալի իրավունքներ Կիլիկիայում ու Անատոլիայի որոշ նահանգներում և խաղաղություն հաստատում Կիլիկիայի սահմաններին»⁵⁴:

«Միանգամայն որոշակի է, — գրում է Ժան Պիշոնը, — որ եթե Ժորժ Պիկոյի բանակցությունները արդյունքի հասնեին, մենք անօգուտ կերպով չէինք ղոհաբերի Կիլիկիայում մեր զինվորներին և մեր դրամը»⁵⁵: Միայն Պիեռ Ռեդանն է իրավացիորեն նշում, որ «Ժորժ Պիկոյի ուղևորությունը Սըվաս՝ Մուստաֆա Քեմալի մոտ, բարձրացրեց վերջինիս արժեքը: Գյուղերում լուր տարածվեց, որ Ֆրանսիացիները քեմալականների ահից ստիպված են լքել Կիլիկիան և հունվարի 1-ին Մարաշը հարձակման ենթարկվեց»⁵⁶:

Ժորժ Պիկոյի ուղևորությունը, ինչպես նշվեց, անհանգստություն ու դժգոհություն առաջ բերեց անգլիական ղեկավար շրջաններում, որպես անմիջականորեն անգլիական քաղաքականությանը հակադրվող անջատ մի քայլ: «Այդ գործողությունը, — գրում էր անգլիական գործակալը լորդ Քերզոնին, — լույս է սփռում այն հաղորդման վրա, որ Ֆրանսիական քաղաքականությունը Մերձավոր Արևելքում ներկայումս ուղղված է բրիտանական ազդեցության ու շահերի դեմ»⁵⁷: Իսկ անգլիական գերագույն կոմիսար Ժովակալ Ռո-

⁵³ Paul du Vèan, op. cit., p. 107.

⁵⁴ Ж. Кайзер, Европа и новая Турция, стр. 27.

⁵⁵ Jean Pichon, op. cit., p. 203.

⁵⁶ Pierre Redan, op. cit., p. 93. Տե՛ս նաև Lord Kinross, նշվ. աշխ., էջ 203.

⁵⁷ Documents on British Foreign Policy 1919—1939. First series, volume IV, p. 560.

բեկը Պոլսից նույն Քերդոնին ուղարկած 1919 թ. դեկտեմբերի 12-ի թվակիր նամակում ընդգծում է, որ Ֆրանսիացիներին շատերը, այդ թվում պաշտոնական դիրք զբաղող անձինք, համակրում են ազգայնական շարժմանը և ցանկանում, որ թուրքական հարցը լուծվի րահահադ, ապա հիմքի վրա, որը կազմում է ազգայնականների ծրագրերի գլխավոր կետը, այսինքն՝ անբաժան Թուրքիայի պահպանումը⁵⁸։ Ու թեև Պիկտյի հանդիպումները Քեմալի հետ համաձայնություն չդտան Ֆրանսիայի կառավարական շրջաններում, որոնք տակավին շահագրգռված լինելով գերմանական ռեպարացիաներում, չէին կարող վերջնականապես դժարել իրենց նախկին դաշնակցի՝ Անգլիայի հետ, վերջինս որոշում է վճռական քայլի դիմել Թուրքիայի բաժանման հարցը արագ վախճանի հասցնելու համար։ 1920 թ. մարտի 16-ի դիշերը անգլիական ղորերը դեսանտ հանեցին Ստամբուլում։ Քաղաքը պաշտոնապես հայտարարվեց զբաղված անգլիացիների կողմից, որոնք ցրեցին օսմանյան պառլամենտը, պատգամավորների մեծ մասին արսորեցին Մալթա կղզին, իսկ սուլթանին ու նրա կառավարությունը, որը նորից գլխավորեց անգլիացի Դամադ Ֆերիդ փաշան, ստիպեցին բացահայտորեն հանդես գալ անատոլիական շարժման դեմ։ Շեյխ-ուլ-Իսլամը Ֆիտվա արձակեց, որով քեմալական շարժումը դիտվում էր որպես խռովություն սուլթանի դեմ, իսկ ինքը՝ Քեմալ փաշան՝ որպես հանցագործ։ Շուտով Ստամբուլի սաղմական ատյանը նրան զրկում է բոլոր տիտղոսներից և մի քանի այլ դործիչների հետ հեռակա կարգով մահվան դատապարտում։

Անգլիայի այս գործողությունները նոր թափ հաղորդեցին քեմալական շարժմանը, իսկ օսմանյան պառլամենտի ցրումը արագացրեց Քեմալի մտահղացման իրականացումը՝ Անատոլիայում նոր պառլամենտի հրավիրումը։ 1920 թ. ապրիլի 23-ին Անկարայում բացվեց Թուրքիայի Ազգային մեծ ժողովը, որի մի ղգալի մասը կազմեցին օսմանյան պառլամենտի այն պատգամավորները, որոնց հաջողվել էր խույս տալ ձերբակալությունից կամ փախչել Մալթայի արսորից։ Ազգային ժողովն իր ձեռքում կենտրոնացրեց ինչպես օրենսդրական, այնպես էլ ղործադիր իշխանությունները, իր գործողությունների հիմքում դնելով 1920 թ. հունվարի 28-ին օսմանյան պառլամենտի կողմից ընդունված «Ազգային ուխտ»։ Միաժամանակ ժողովը որոշում կայացրեց, որ Ստամբուլի զբաղման

⁵⁸ Նույն տեղում, էջ 587։

որից՝ մարտի 11-ից հետո, սուլթանի և կառավարության արձակած հրամանները ենթակա չեն կատարման Անկարայի կառավարության կողմից:

Մինչ Անկարայում ստեղծված նոր կառավարությունը համախմբում էր երկրի բոլոր ուժերը Անտանտի տերությունների դեմ պայքարն առավել կազմակերպված մղելու համար, այս վերջինները, հենց այդ օրերին որոշում էին Օսմանյան կայսրության մեջ մտնող երկրամասերի «վերջնական» բաժանման հարցը: 1920 թ. ապրիլի 19—26-ը Սան-Ռեմոյում հրավիրված դաշնակիցների կոնֆերանսը մշակեց Թուրքիայի հետ կնքվելիք հաշտության պայմանագրի նախագիծը. Անգլիան ստանում էր Պադենտինի և ամբողջ Մեսոպոտամիայի (Իրաքի) կառավարման մանդատը, իսկ Ֆրանսիան՝ Սիրիայի և Լիբանանի մանդատը: Միաժամանակ Անգլիան համաձայնում էր, որ Կիլիկիան միացվեր Սիրիային: Այս վերջին «գիշումը» Անգլիայի կողմից իրական ոչ մի արժեք չունեի, որովհետև նրան քաջ հայտնի էր, որ ֆրանսիական զորքերը չեն կարողանա իրենց ձեռքում պահել Կիլիկիան, մինչդեռ Ֆրանսիան Անգլիային էր զիջում ստրատեգիական մեծ կարևորություն ունեցող և նավթի պաշարներով հարուստ Մոսուլի շրջանը, որի դիմաց ապրիլի 24-ին ստորագրված անգլո-ֆրանսիական համաձայնագրով նա ապագայում ստանալու էր Մոսուլի նավթի հանույթի 25 տոկոսը:

Սան-Ռեմոյի կոնֆերանսը նշանավորում էր անգլիական դիվանագիտության հաղթանակը Ֆրանսիայի նկատմամբ Մերձավոր Արևելքում: Դրա պատճառը, ինչպես նախկինում, Ֆրանսիայի կախվածությունն էր Անգլիայից եվրոպական գործերում: Վերը հիշատակված Ժակ Կայզերը նշում է, որ այդ շրջանում ֆրանսիական ամբողջ արտաքին քաղաքականությունը դեմ էր առել հետևյալ տանջալից երկընտրանքին. Անգլիային գործողությունների ազատություն տալ Արևելքում՝ Հոնոսի վրա աշակցություն ստանալու հույսով, կամ հակադրել Անգլիային Արևելքում և այդպիսով մեկուսացված մնալ՝ Գերմանիային դեմ-հանդիման: Ֆրանսիայի առաջին ներկայացուցիչ Միլերանը գերադասեց զիջել անգլիական պահանջներին Արևելքում՝ Հոնոսի վրա անգլիական դաշնակիցների հնարավոր աշակցությունը ձեռք բերելու համար⁵⁹:

Դաշնակիցների կողմից Սան-Ռեմոյում մշակված պայմանագրի նախագիծը, սակայն, չընդունվեց սուլթանական կառավարության

⁵⁹ Ж. Кайзер, Европа и новая Турция, стр. 29.

կողմից: Նախագծի «բննարկմանը» մասնակցելու նպատակով Թե-
ֆիկ փաշայի ղլխավորությամբ 1920 թ. մայիսի 11-ին Փարիզ ժա-
մանած Թուրքական պատվիրակությանը առաջարկվեց առանց քն-
նարկման ստորագրել պայմանագիրը: Պատվիրակությունը հրա-
ժարվեց պայմանագիր կնքել վերը թվարկված պայմաններով և մեկ-
նեց Կ. Պոլիս՝ իր հետ տանելով պայմանագրի նախագիծը:

Տեսնելով, որ անգամ Անտանտից կախված Կ. Պոլսի կառա-
վարությունը չի համարձակվում տերիտորիալ դիշումներ նախա-
տեսնող պայմանագիր կնքել դաշնակից պետությունների հետ,
Ֆրանսիական ղիլանագիրտությունը Անկարայի կառավարության
հետ համաձայնության գալու և Կիլիկիայում ռազմական գործողու-
թյունները դադարեցնելու նոր փորձ արեց: Քեմալականների հետ
«բեզուլ գտնելու» մյուս պատճառն այն էր, որ Ֆրանսիան այդ ժա-
մանակ լուրջ ղժվարությունների էր հանդիպել իրեն «հանձնված»
երկրում՝ Սիրիայում, որի բնակչությունը, հենց նոր ազատագրված
օսմանյան լծից, չէր ցանկանում մի նոր լծի տակ ընկնել⁶⁰:

Վերջապես, քեմալականների հետ «հաշտվելու» անհրաժեշտու-
թյունը թելադրվում էր Կիլիկիայի մի շարք քաղաքներում նրանց
ձևոր բերած որոշակի ռազմական հաջողություններով⁶¹: Պետք է
ավելացնել նաև, որ քեմալականների կողմից մղված պրոպագանդի
շնորհիվ ժթրքական ուժին առասպելական չափ տված ու մինչև կես
միլիոն կանոնավոր զինվորի քանակին բարձրացրած էին... և գրե-
թե բոլոր Ֆրանսիական թերթերը Կիլիկիայի անմիջական պարպումը
կր պահանջեին⁶²: 1920 թ. մայիսի սկզբին Ֆրանսիացիները առա-
ջին փորձն են անում կապեր հաստատելու և բանակցությունների
մեջ մտնելու Անկարայի ղեկավար շրջանների հետ: Այդ նպատա-
կով Սաամրուլից Անկարա է մեկնում մի բարձրաստիճան զինվո-
րական և մի քաղաքացիական անձ: Բանակցությունները, որոնցում
որպես միջնորդ հանդես էր գալիս Վանի նախկին պատգամավոր
Հայդար բեյը, այդ ժամանակ շոշափելի արդյունքի չհասնեցին⁶³:

⁶⁰ Ֆրանսիական հեղինակներից Ժան Պիեռ Ալեմը գտնում է, որ ժամանա-
կավոր զինազորարի հիմնական շարժառիթն էր Ֆրանսիական ուժերն ուղղել էմիր
Ֆեյսալի դեմ և ջախջախել նրան: Տե՛ս Jean Pierre Alem, L'Arménie,
Paris, 1962, էջ 67:

⁶¹ Lord Kinross, op. cit., p. 204.

⁶² Տե՛ս Վ. Լ. Խոսեյնյան, Օրադրություն ուղեորության նվրապա-
Սահակ Բ. կաթողիկոսին Կիլիկիայ, Հալեպ, 1928, էջ 13:

⁶³ М. Кемаль, Путь новой Турции, т. III, стр. 87.

Ավելի ուշ՝ մայիսի վերջերին, Անկարա է գալիս Բեյրութում ֆրանսիական զինված ուժերի կոմիսարիատի գլխավոր քարտուղար Ռոբեր դը Քեի գլխավորած միսիան, որի հետ Մուստաֆա Քեմալը «երկար ու ծանր բանակցություններից հետո» մայիսի 30-ին կնքում է զինադադար 20 օրով⁶⁴։

Անկարայում ստորագրված զինադադարի պայմանագիրը նախատեսում էր.

1. Առաջին 10 օրվա ընթացքում ֆրանսիական և մահմեդական բոլոր բանտարկյալների՝ ռազմական թե՛ քաղաքական, փոխանակում.

2. Ֆրանսիական զորքերի նահանջը մինչև Մերսին—Ադանա—Իսլահիե երկաթգիծը. Սսի, Բողանթիի, Այնթապի, ինչպես նաև երկաթգծից հյուսիս ընկած քաղաքների պարպում.

3. Թշնամական բոլոր գործողությունների դադարեցում՝ մայիսի 30-ի կեսգիշերից հաշված⁶⁵։

Վերևում ասվեց քեմալականների հետ համաձայնության հասնելու՝ ֆրանսիացիների ղրդապատճառների մասին։ Ինչ վերաբերում է Անկարայի կառավարության հետապնդած նպատակներին, այդ մասին Քեմալը իր 1927 թ. հայտնի ճառում հետևյալն է ասել. «Ամենից առաջ ես ուզում էի Ադանայի գոտում և Ադանայի ճակատում գտնվող ազգային ուժերի վերակառուցում անցկացնել... Բացի դրանից, ես ի նկատի ունեի քաղաքական շահ, որն այդ պահին մեզ համար խիստ կարևոր էր. Ազգային մեծ ժողովը և նրա կառավարությունը չէին ճանաչվել Անտանտի տերությունների կողմից, ընդհակառակը, երկրի ու ազգի ապագային վերաբերող հարցերի շուրջ այդ տերությունները բանակցում էին Դամադ Ֆերիդ փաշայի կառավարության հետ Ստամբուլում։ Եվ այն փաստը, որ ֆրանսիացիները, շրջանցելով Ստամբուլի կառավարությանը, մեզ հետ բանակցությունների մեջ են մտնում և համաձայնագիր ստորագրում՝ ինչ հարցի վերաբերյալ էլ դա լինի, այդ ժամանակ մեզ համար քաղաքական խոշոր հաջողություն էր... Այդ բանակցություններից ես այն տպավորությունն ստացա, որ ֆրանսիացիները պատրաստ են իրենց զորքը հանել Ադանայի մարզից»⁶⁶։

⁶⁴ E. Brémond, op. cit., p. 53; Paul Bernard, Six mois en Cilicie, Aix-en-Provence, 1929, p. 40.

⁶⁵ Paul du Vèon, op. cit., p. 219; Pierre Redan, op. cit., p. 101.

⁶⁶ Мустафа Кемаль, Путь новой Турции, т. III, стр. 87—88.

Մայիսի 30-ի ղինադադարը, իսկապես, նշանակալից հաջողութիւն էր քեմալականների համար, մինչդեռ ֆրանսիացիները ոչ միայն որեւէ շոշափելի օգուտ չբաղեցին դրանից, այլև կրեցին բարոյական մեծ պարտութիւն, որն իր հերթին ռազմական նոր անհաջողութիւններ բերեց Զբանսիային Կիլիկիայում: «Զինադադարի հրապարակումը,— խոստովանում է Պիեռ Ռեդանը,— կատարյալ հեղաբեկում առաջ բերեց Կիլիկիայի ազգաբնակչության մեջ: Մինչ այդ մենք կողմնակիցներ ունեինք, իսկ մայիսի վերջից սկսած մի համընդհանուր զայրույթ ու դժգոհութիւն ծայր առավ. տատանվողները, շեղոքները, որոնք դեռ կարծում էին, թե ֆրանսիական ուժերը կգան հզորացնելու վիլայիթում առկա զորքերը, լրիվ կորցրեցին վստահութիւնը մեր զորքերի հանդեպ...»⁶⁷:

Կիլիկիայում ֆրանսիական վարչական վերահսկողության ղեկավար զնդապետ Բրեմոնը նույնպես խոստովանում է, որ ղինադադարը «հիասթափութիւն առաջ բերեց, ֆրանսիացիներից վանեց և քեմալիզմին հարել պարտադրեց այն թուրքերին, որոնք հավատ էին ընծայում ֆրանս-թուրքական բարեկամութեանը»: Միաժամանակ, նա ընդգծում է այն փաստը, որ Մուստաֆա Քեմալի լայն խոստումներ՝ վերջ դնելու թշնամանքին, նույնպես չիրականացան⁶⁸:

Սակայն ֆրանս-քեմալական ղինադադարից առավել տուժեցին Կիլիկիահայերը: Եթե Ժորժ Պիկոյի ուղեորութիւնը Սըվաս հանգիցրեց քեմալական ուժերի համախմբմանը, ֆրանսիական զորքերի նահանջին և դրա հետեանքով Մարաշի 12 հազար հայերի զարհուրելի կոտորածին, ապա Ռոբեր դը Քեի առաքելութիւնը Անկարա, վերստին դրսևորելով Զբանսիայի դիրքերի թուլութիւնը Կիլիկիայում և ֆրանսիական դիվանագիտության տատանումները, խրախուսեց ազգայնական այն ուժերին Կիլիկիայում, որոնք հարմար պահէին սպասում հայերի դեմ խժդժութիւններ ձեռնարկելու համար: Հասկանալի է, որ ֆրանսիացիների հեռանալուց հետո հայերն այլևս չէին կարող մնալ իրենց հարազատ վայրերում, ստիպված էին նահանջելու ֆրանսիական զորքի հետ մեկտեղ: Այդ ձևով հայութեանից դատարկվեց հինավուրց Սիսը՝ Կիլիկիայի հայ կաթողիկոսի աթոռանիստ քաղաքը: Զինադադարի համաձայն ֆրանսիական կայազորը 1920 թ. հունիսի սկզբին թողեց քաղաքը՝ իր հետ

⁶⁷ Pierre Redan, op. cit., p. 101.

⁶⁸ E. Brémont, op. cit., p. 54—55.

տանելով 7500 հայ փախստականների, որոնք հունիսի 7-ին ժամանեցին Ադանա՝ կապիտան Բայարդայի ղորասյան ուղեկցությամբ⁶⁹։ «Այդ մարդիկ,— գրում է գնդապետ Բրեմոնը,— ավերված, խարված, դայրացած այն բանից, որ ստիպված են լքել Փոքր Հայքի մայրաքաղաքը, կաթողիկոսի նստավայրը, գալիս էին անկարգության տարր դառնալու Ադանա քաղաքում, ուր տեղավորվում էին մեծ զօվարության՝ բազմապատկելով օրեցօր սաստկացող սովը»⁷⁰։

Յրանս-քեմալական զինադադարը նոր զօգոհություն առաջ բերեց ոչ միայն Կիլիկիայում, այլև Յրանսիայում։ Պառլամենտում սուր բանավեճեր էին գնում ֆրանսիական զորքերի Կիլիկիայում մնալու նպատակահարմարության և հեռանկարների շուրջ։ Կառավարական շրջաններում նույնպես լուրջ տարաձայնություններ կային «Թուրքական հարցում» Յրանսիայի վարած քաղաքականության շուրջ։ Զինվորական կուսակցությունը մարշալ Ֆոշի գլխավորությամբ պահանջում էր առավել խիստ միջոցների դիմել «Յրանսիայի հեղինակությունը փրկելու համար»։ Միլերանի կառավարությունը «առժամանակ» ստիպված էր հաշվի նստել «աջերի» գրաված դիրքի հետ։ Ի վերջո Յրանսիան 1920 թ. հունիսի 20—21-ին Բուլոնում կայացած Անտանտի Գերագույն խորհրդի նիստին հանդես գալով Անդլիայի հետ համատեղ, միացավ Անատոլիայում հունական հարձակում ձեռնարկելու վերաբերյալ որոշմանը, իսկ 1920 թ. օգոստոսի 10-ին դաշնակից մյուս պետությունների հետ մեկտեղ Սևրում հաշտության պայմանագիր կնքեց Թուրքիայի հետ։

Սևրի պայմանագիրը ստորագրվեց մի կողմից Մեծ Բրիտանիայի, Յրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Հայաստանի, Բելգիայի, Հեջազի, Լեհաստանի, Հունաստանի, Ռումինիայի, Պորտուգալիայի, Չեխոսլովակիայի, Հարավսլավիայի, մյուս կողմից՝ Թուրքիայի միջև։

Սևրի պայմանագրով Արևելյան Թրակիան Ադրիանապոլսի հետ, Գապուլիի ամբողջ թերակղզին, ինչպես և Իզմիր քաղաքն իր մերձակայքով տրվում էին Հունաստանին։ Կոստանդնուպոլիսը մնում էր Թուրքերի ձեռքում, սակայն, 36-րդ հոդվածի համաձայն, եթե Թուրքիան հրաժարվեր պայմանագրի որոշումները կատարելուց, մասնավորապես փոքրամասնությունների էթնիկական, կրոնական

⁶⁹ Paul du Vêou, op. cit., p. 222 Մանրամասն տե՛ս Միսս քե-լե-լե-ն, Միս-Մատեան, Պեյրութ, 1949, էջ 622—627։

⁷⁰ E. Brémont, op. cit., p. 55.

ու լեզվական իրավունքները հարգելուց, Դաշնակից տերություններին իրավունք էր վերապահվում փոփոխել իրենց նախորդ որոշումը: Նեղուցների գոտին նույնպես մնում էր Թուրքական իրավասության ներքո, սակայն լրիվ ապառաղմականացվում էր և դրվում հաստիկ միջազգային կազմակերպության՝ «Նեղուցների հանձնաժողովի» փերահսկողության տակ:

Մերիան, Լիբանանը, Մեսոպոտամիան և Պաղեստինը անջատվում էին Օսմանյան կայսրությունից և հանձնվում մանդատային կառավարմանը (հոդված 94—95): Թուրքիան պարտավորվում էր ճանաչել որպես ինքնուրույն պետություններ Հեջազի թագավորությունը (հոդված 98) և Հայաստանը՝ Տրապիզոնի, էրզրումի, Վանի և Բիթլիսի վիլայիթների սահմաններում: Թուրքիայի ու Հայաստանի սահմանը հիշյալ տերիտորիայի շրջանակներում որոշվելու էր համաձայն ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնի միջնորդ վճռի (հոդված 88—89):

62-րդ հոդվածով նախատեսվում էր տեղական ինքնավարություն քղաքնակ այն շրջանների համար, որոնք կընկնեին ապագա Հայաստանի հարավային սահմաններից հարավ և Թուրքիայի ու Մերիայի ու Մեսոպոտամիայի սահմանից հյուսիս: Վերջնական տերիտորիան որոշելու էր բրիտանական, ֆրանսիական և իտալական կառավարությունների կողմից նշանակված ներկայացուցիչների հանձնաժողովը, որի որոշումները պարտադիր էին լինելու Թուրքիայի համար (հոդված 63): Եթե պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մեկ տարի հետո, 62-րդ հոդվածում նշված մարզերի քուրդ ազգաբնակչությունը դիմեր Աղզերի Լիգայի խորհրդին. և եթե խորհուրդը գտներ, որ այդ բնակչությունը ընդունակ է անկախության, Թուրքիան պարտավորվում էր հրաժարվել այդ մարզերի նկատմամբ ունեցած բոլոր իրավունքներից (հոդված 64):

Պայմանագրի առանձին բաժնում խոսվում էր Թուրքիայի ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին, 141-րդ հոդվածով Թուրքիան պարտավորվում էր ապահովել երկրի «բոլոր բնակիչների կյանքի ու ազատության լիակատար պաշտպանությունը, անկախ ծագումից, ազգությունից, լեզվից, ցեղից կամ կրոնից»: Այդ տեսակետից կարևոր նշանակություն ուներ հաջորդ, 142-րդ հոդվածը, որտեղ ասված էր հետևյալը.

«Ե՛նկատի ունենալով, որ 1914 թվականի նոյեմբերի 1-ից հետո Թուրքիայում իշխող տեռորիստական ուժերի պայմաններում իսլամի դավանանքի ընդունումը չէր կարող տեղի ունենալ նորմալ կար-

զով, այդ ժամանակից ի վեր կատարված դավանափոխությունը չի ձանաչվում, իսկ յուրաքանչյուր անձ, որը մինչև 1914 թ. նոյեմբերի 1-ը մահմեդական չի եղել, դիտվելու է որպես այդպիսին մնացած...

Պատերազմի ժամանակ Թուրքիայում կատարվող զազանությունների հետևանքով մարդկանց պատճառած չարիքը առավել լայն շափով ուղղվելու համար Օսմանյան կառավարությունը պարտավորվում է ամեն կերպ տրամադրել իր և օսմանյան իշխանությունների օժանդակությունը՝ փնտրելու և ազատելու ամեն ցեղի ու կրոնի բոլոր այն մարդկանց, ովքեր անհայտացել, առևանգվել, երկրի խորքն են քշվել և կամ ազատությունից զրկվել 1914 թ. նոյեմբերի 1-ից հետո...»⁷¹:

Սերի պայմանագիրը ստրկացուցիչ պայմանագիր էր Թուրքիայի համար, որը զրկվում էր Իզմիրի մարզից, Արևելյան Թրակիայից Ադրիանապոլսի հետ մեկտեղ, Դարդանեյի եվրոպական ափից և Գալիպոլիական ամբողջ թերակղզուց: Կապիտուլյացիաների ռեժիմը ոչ միայն վերականգնվում էր Անտանտի տերությունների կողմից, այլև տարածվում դաշնակից այն տերությունների վրա, որոնք մինչև համաշխարհային պատերազմը չէին օգտվում այդ փրավունքից (հոդված 261): Թուրքական ֆինանսների կարգավորման համար ստեղծված ֆինանսական հանձնաժողովի կազմի մեջ էին մտնում Ֆրանսիայի, Բրիտանական կայսրության, Իտալիայի և Թուրքիայի ներկայացուցիչները: Խորհրդակցական ձայն ունեւր միայն վերջինս (հոդված 231): Այդ նույն հանձնաժողովին իրավունք էր վերապահվում իր լիակատար վերահսկողությունը ենթարկել Թուրքիայի ամբողջ տնտեսությունը և այլն:

Պետք է նշել, սակայն, որ Օսմանյան կայսրության կեղեքված ժողովուրդների՝ արաբների, քրդերի, հայերի ազգային ինքնուրույնության ու անկախ պետականության հարցի արժարժումը Սերի պայմանագրում մի քայլ առաջ էր այդ ժողովուրդների ազատագրության և ինքնուրույն պետության ստեղծման ճանապարհին: Զիշտ է, ազատագրվելով թուրքական դարավոր լծից, այդ ժողովուրդները ընկնելու էին կախման մեջ Արևմուտքի իմպերիալիստական խոշոր տերություններից, սակայն պատմության ընթացքը և, մասնավորապես, Օսմանյան կայսրությունից անջատված արաբական երկրների պատմական զարգացումը ցույց տվեց, որ առավել

⁷¹ Մանրամասն տե՛ս Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне. Полный перевод с французского текста под ред. проф. Ю. В. Ключникова и проф. А. В. Сабанина, М., 1927, стр. 25—45.

դյուրին է և իրական ազատագրվել իմպերիալիստական տերությունների լծից, քան թուրքական (լինի դա սուլթանական, իթթիհազական թե քեմալական) դարավոր լծից:

Դառնանք Ֆրանսիայի առնչությանը Սևրի հաշտության պայմանագրին: Ինչպես երևում է պայմանագրի հոդվածներից, Ֆրանսիան առանձնապես մեծ բան չէր շահում. ֆինանսական վերահսկողությունը, որտեղ նա մինչ պատերազմը գերակշռող դիրք ուներ, նա այժմ պետք է իրականացնեի Անգլիայի և Իտալիայի հետ համատեղ, նեղուցներում Ֆրանսիան ստորագրա դիրք էր գրավելու Անգլիայի համեմատ, իսկ Արևմտյան Հայաստանի, Քուրդստանի ու Իզմիրի անջատումով նա զրկվելու էր տնտեսական ու դրամական հսկայական շահույթներից: Եթե այս բոլորին ավելացնենք Ֆրանսիայի պարտավորությունը՝ Կիլիկիան վերադարձնել Քուրդիստան, ապա լիովին հասկանալի կդառնա այն դժգոհությունը, որ Սևրի պայմանագրի ստորագրումը առաջ բերեց Ֆրանսիայի ազդեցիկ քաղաքական շրջաններում ու ֆրանսիական մամուլում:

«Ֆրանսիայում Սևրի պայմանագիրը ուժեղ դիմադրության հանդիպեց այն շրջանակներում,— գրում է Պայառեսը,— որոնք այն տարօրինակ կարծիքին էին, թե հանրապետությունը (Ֆրանսիան—Ռ. Ս.) մահմեդական մի տերություն է»⁷²:

Պայմանագրի տակ ֆրանսիական ներկայացուցիչների ստորագրության թանաքը դեռ չէր դրացած, այդ նույն մարզիկ սկսեցին հանդես գալ Սևրից հրաժարվելու այլազան առաջարկներով, իսկ արտաքին գործերի մինիստրության լսավորող հանդիսացող «Ճան» թերթը չէր դադարում կոչ անելուց չեղյալ հայտարարել պայմանագիրը»⁷³:

«Քուրդական պայմանագիրը,— գրում էր Պուանկարեն,— ստորագրվեց Սևրում՝ ճենապակու գործարանի գտնվելու վայրում... Եվ նա ինքը փխրուն իր է, գուցե և ջարդված վազա: Մի դիպչեք նրան: Արդեն վերջին բոպին, Ռոդոս կղզու ապագա ճակատագրի հարցում Հունաստանի ու Իտալիայի հակադիր տեսակետները քիչ մնաց խափանելին ամբողջ գործը: Բազմիցս հայտարարված ստորագրության արարողությունը անընդհատ հետաձգվում էր: Այն վերջապես տեղի ունեցավ հոգնածության ու անտարբերության միջնորոտում և ուշադիր դիտորդներից մի քանիսը միայն, ոչ առանց

⁷² Michel Paillarès, op. cit., p. 190.

⁷³ Նույն տեղում:

մեկամաղձության նկատեցին, որ դրանով սրբազործվում էր Ֆրանսիական ազդեցության խիստ թուլացումը Արևելքում»⁷⁴:

Պայմանագրի վավերացումը լուրջ դիմադրության հանդիպեց Ֆրանսիայի Ազգային ժողովում և Սենատում:

«Առաջին իսկ ժամից.— խոստովանում էր մինիստրների խորհրդի նախագահ Ա. Բրիանը,— պառլամենտը հանդես բերեց իր բացասական վերաբերմունքը Սերի պայմանագրի վավերացման հարցում: Եվ ես մեր դաշնակիցներին պարզորոշ ասացի, որ չպետք է հույս դնել Ֆրանսիական պառլամենտի վրա՝ վավերացնելու համար Սերի պայմանագիրը այն տեսքով, ինչպիսին որ նա կա, որովհետև նա ուժեղ կերպով ոտնահարում է Ֆրանսիական ավանդույթները, խիստ հակադրվում մեր շահերին ինչպես ներկա պահին, այնպես էլ ապագայի տեսանկյունից, և որ անհրաժեշտ է վերստին ուսումնասիրել և փոփոխել այն...»⁷⁵:

Սերի պայմանագիրը վերանայելու կողմնակիցները ելնում էին նաև քեմալականներին ոչ մեծ դիշումներ անելու գնով նրանց հակասովետական խմբավորման մեջ ընդգրկելու ձգտումներից: 1920 թ. ամռան ամիսներին Անկարայի կառավարության արտաքին քաղաքական դիրքերը զգալիորեն ամրապնդվել էին շնորհիվ Սովետական Ռուսաստանի հետ հաստատված դիվանագիտական հարաբերությունների: Սերի պայմանագրի ստորագրման ժամանակ և դրանից հետո Մոսկվայում էր գտնվում թուրքական պատվիրակությունը Բեքիր Սամի-բեյի գլխավորությամբ, որը օգոստոսի 24-ին նախական պայմանագիր ստորագրեց ՌՍՖՍՀ կառավարության հետ: Ֆրանսիական դիվանագիտությունը սովետա-թուրքական հետագա մերձեցումը կանխելու համար, փորձ է անում քեմալական Թուրքիային դուրս բերել Սովետական Ռուսաստանի դեմ՝ օգտագործելով տերիտորիալ հարցերում նրանց միջև ծագած տարաձայնությունները: Ֆրանսիական զորավար դը Բուրգոնը, Կոստանդնուպոլսի գրավման կորպուսի հրամանատարը, առաջարկում էր Թուրքիային վերադարձնել Իզմիրն ու Թրակիան՝ նրան Ֆրանսիայի կողմը գրավելու համար:

«Ես կարծում եմ,— գրում է նա,— որ դա այնքան էլ թանկ վճար չէր լինի աշխարհի միակ բանակին, որը ներկայումս կարող է հանդես գալ բոլշևիկների դեմ»⁷⁶:

⁷⁴ *ՏՆ՝Ս* Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, стр. XVIII.

⁷⁵ *„L'Asie française“*, № 194, juillet-août 1921, p. 312—313.

⁷⁶ *ՏՆ՝Ս* «История дипломатии», изд. второе, т. III, стр. 214.

Սևրից հրաժարվելու անհրաժեշտության մասին գրում էին բո-
լոր ազդեցիկ ֆրանսիական թերթերը: Սովետա-լեհական պատե-
րազմում և Վրանդելի դեմ երիտասարդ Սովետական Ռուսաստանի
տարած վճռական հաղթանակներից հետո ֆրանսիական մամուլն
առավել մեծ անհանգստություն էր գրում այն մասին, որ Անտան-
տի տերությունների անհեռատես քաղաքականությունը քեմալա-
կաններին նետում է բոլշևիկների դիրկը՝ նրանց դեմ դուրս բերե-
լու փոխարեն: «Անհրաժեշտ է, — գրում էր «Տան» թերթը 1921 թ.
հունվարի 24-ին, որ Անատոլիան դադարի բոլշևիկացման են-
թարկվելուց: Իսկ այդ բանը հնարավոր կդառնա Սևրի պայմանա-
դիրը վերանայելուց հետո միայն»⁷⁷: Իսկ «Վիկտուար» թերթը առա-
ջարկում էր ընդունել Քեմալի բոլոր պայմանները, որովհետև
«Ասիայում ռուսական բոլշևիզմի լավագույն պատվարը ազգայնա-
կան Թուրքիայի հետ համաձայնության գալն է»: «Թուրքական բա-
նակը, — ասվում էր նույն հոդվածում, — կկասեցնի բոլշևիզմը ամ-
բողջ Ասիայում և որպես դրա սկիզբը կաղատագրի Բաքվի նավ-
թարեր հողերը»⁷⁸:

Միաժամանակ, ֆրանսիական դիվանագիտությունը ծրագրում
էր քեմալականների հետ մերձեցումն օգտագործել Մերձավոր Արև-
վելքում Անդլիայի դիրքերը և ազդեցությունը թուլացնելու նպատա-
կով, օգտագործելով նաև Սևրից հետո հատկապես անգլիական իմ-
պերիալիզմի դեմ ծայր առած դժգոհությունն ու զայրույթը: Ֆրան-
սիական պառլամարան Տեստին մատնանշում է, որ Սևրից հետո քե-
մալականների վերաբերմունքը ֆրանսիացիների հանդեպ միանգա-
մայն խաղաղասիրական էր, որովհետև Կիլիկիան թողնվում էր
Թուրքիային և վերջինիս հիմնական երկյուղը Ֆրանսիայի մտա-
դրությունների հանդեպ ցրվել էր, մինչդեռ Անգլիան շարունակում
էր տեղ ու տնօրինություն անել Կոստանդնուպոլսում՝ առավել գրգռ-
ոկով թուրքերին⁷⁹:

1920 թ. նոյեմբեր-դեկտեմբերին կայացած Լոնդոնի երկրորդ
կոնֆերանսում և 1921 թ. հունվարին Փարիզում դումարված Ան-
տանտի Գերագույն խորհրդի նիստում Ֆրանսիային հաջողվում է
հասնել այն բանին, որ ընդունվում է որոշում՝ Սևրի պայմանագիրը
մասնակի փոփոխությունների ենթարկելու և այդ նպատակով Լոն-
դոնում դաշնակից տերությունների կոնֆերանս հրավիրելու մասին:

⁷⁷ Տե՛ս «Вестник НКВД», 15.III 1921.

⁷⁸ Տե՛ս «Известия», 19.II 1921.

⁷⁹ Testis, op. cit., p. 45.

Կոնֆերանսին հրավիրվում էին Հունաստանի և Թուրքիայի ներկայացուցիչները, ըստ որում վերջինիս թուլլատրվում էր հանդես գալ երկու պատվիրակություններով՝ Կ. Պոլսի կառավարության և Անկարայի կառավարության: Մեծ վեղիր Թեվֆիկ փաշայի բոլոր ջանքերը՝ միացյալ մի պատվիրակություն ուղարկելու Լոնդոն, ապարդյուն անցան: Այս առթիվ նրա և Մուստաֆա Քեմալի միջև տեղի ունեցած նամակագրության ընթացքում վերջինս վճռակա-նորեն պահանջում էր, որ միայն Անկարայի Մեծ ժողովի պատվիրակները մեկնեն Լոնդոն, որպես ամբողջ Թուրքիայի միակ օրինական ներկայացուցիչներ⁸⁰: Համաձայնություն չկայացավ, և Անկարայի կառավարությունը կազմեց առանձին պատվիրակություն՝ արտաքին գործերի մինիստր Բեքիր Սամի-բեյի գլխավորությամբ, որը պետք է մեկնեի Լոնդոն և մասնակցեի կոնֆերանսին՝ հատուկ հրավեր ստանալու դեպքում միայն⁸¹: Քեմալականները վստահ էին, որ նման հրավեր կստացվի, ուստի և, ժամանակ շահելու նպատակով, պատվիրակությունը Ադալիա քաղաքի վրայով ուղևորվում է Հռոմ, որտեղ և Իտալիայի արտաքին գործերի մինիստր Սֆորցան պաշտոնապես հայտնում է, որ Անկարայի կառավարության պատվիրակությունը հրավիրվում է Լոնդոնի կոնֆերանսին:

1921 թ. փետրվարի 21-ին բացված Լոնդոնի կոնֆերանսում սուլթանի ներկայացուցիչները, որոնք ռանխոս դերասանների դեր էին կատարում⁸², ձուլվեցին քեմալական պատվիրակությանը և Ռեշիդ փաշան Կ. Պոլսի պատվիրակության անունից պաշտոնապես հայտարարեց, որ Բեքիր Սամի-բեյը լիազորվում է արտահայտելու թուրքական տեսակետը⁸³: Փետրվարի 27-ին թուրքական միացյալ պատվիրակությունը ներկայացրեց իր պահանջները.

1. Եվրոպական մասում 1913 թ. սեպտեմբերի 16-ի թուրք-բուլղարական պայմանագրով գծված սահմանի վերականգնում, այսինքն՝ ամբողջ Արևելյան Թրակիան վերադարձնել Թուրքիային.

2. Թուրքիայի հարավային սահմանները պետք է անցնեն այն գծով, որը բաժանում է նրան արաբական մեծամասնությամբ բնակեցված շրջաններից: Այդ գիծը կորոշվի Թուրքիայի և շահագրգռված կողմի միջև կնքված համաձայնագրով: Այդ գծից հյուսիս ընկած

⁸⁰ *SM* M. Кемаль, Путь новой Турции, т. III, стр. 177—199.

⁸¹ *SM* La guerre de l'indépendance turque. Publié par la Direction Générale de la Presse au Ministère de l'Intérieur. Ankara, 1937, p. 52—53.

⁸² Michel Païllarès, op. cit., p. 206.

⁸³ „L'Asie française“, Mars 1921, p. 90.

վայրերը, որոնք բնակեցված են թուրքերով, ինչպես և Կիլիկիան, պետք է պարսվեն օտար զորքերից և վերադարձվեն Թուրքիային.

3. Թուրքիայի արևելյան սահմանը պետք է անցնի թուրք-պարսկական սահմանագծով և Թուրքիայի ու Հայաստանի միջև կնքված պայմանագրի (Ալեքսանդրապոլի—Ռ. Ս.) համաձայն.

4. Իզմիրը և Փոքր Ասիայի բոլոր այն տերիտորիաները, որոնք զբաղված են հույների կողմից, պետք է վերադարձվեն Թուրքիային.

5. Նեղուցներում ազատ նավարկության սկզբունքի հաստատում, այն հաշվով, սակայն, որ ապահովվի Կ. Պոլսի կատարյալ անվտանգությունը և Թուրքիայի սուվերենությունը.

6. Փոքրասիանությունների, նրանց կրոնի և լեզվի պաշտպանությունը կապահովվի նույն կարգով, ինչ որ նախատեսված է Սեն-ժերմենի, Նեյիի և Տրիանոնի պայմանագրերով.

7. Օսմանյան սուվերենության հարգումը.

8. Ռազմական և ծովային ուժերի չափը որոշելիս հաշվի առնել երկրի սահմանների տարածվածությունը, ինչպես և հարևան երկրների քաղաքական վիճակը՝ դրան համապատասխանորեն ապահովելու համար ներքին կարգ ու կանոնը և սահմանների անվտանգությունը.

9. Թուրքիայի ֆինանսական ու տնտեսական անկախության ճանաչում՝ կապիտուլյացիաների ռեժիմը լրիվ վերացնելու և երկրի համակողմանի զարգացումն ապահովելու միջոցով⁸⁴:

Թուրքական, փակ ավելի ճիշտ՝ Անկարայի պատվիրակության կողմից ներկայացված հաշտության ծրագիրը ըստ էության արտահայտում էր «Ազգային ուխտի» բոլոր հիմնական սկզբունքները, այսինքն՝ այն չէր ճանաչում քրդերի ու հայերի ազգային ինքնորոշման իրավունքը, օրինականացնում էր Կարսի մարզի զավթումը քեմալականների կողմից և ոչ մի լուրջ երաշխիքներ չէր ապահովում Թուրքիայի ազգային փոքրամասնություններին:

Փետրվարի 26-ի նիստում դաշնակից տերությունները մերժեցին թուրքական առաջարկները և անցան կոնֆերանսի մյուս՝ ռազարացիոն հարցի քննարկմանը: Միաժամանակ, Անտանտի գլխավոր տերությունները՝ Անգլիան ու Ֆրանսիան ստեղծված ընդմիջումըն օգտագործեցին թուրքական պատվիրակության ղեկավար Բեքիր Սամի-բեյի հետ անջատ բանակցություններ վարելու համար:

⁸⁴ „L'Asie française“, mars 1921, p. 90—91.

Անգլիական դիվանագիտության հետապնդած նպատակն էր քեմալականներին աննշան զիջումներ անելով համաձայնության դալ նրանց հետ և օգտագործել հակասովետական ծրագրերում: Բեքիր Սամիր-բեյը ընդառաջ էր գնացել Լոյդ-Ջորջին, և նրա հետ ռենցած զադտնի զրույցների ժամանակ առաջարկել էր Թուրքիան ընդգրկել հակասովետական խմբավորման մեջ՝ նրան միացնելով Հյուսիսային Կովկասի լեռնականներին և այդպիսով ստեղծելով Խոֆիսային ֆեդերալ պետություն Արևմուտքի և Սովետական Ռուսաստանի միջև⁸⁵: Սակայն բանակցությունների զադտնիքը անսպասելիորեն հայտնի դարձավ և հրապարակվեց մամուլում, և Թուրքիայի Ազգային մեծ ժողովը ստիպված էր Բեքիր Սամիր-բեյին ազատել արտաքին գործերի մինիստրի պաշտոնից⁸⁶:

Ինչ վերաբերում է Ֆրանսիայի քաղաքականությանը, այն Լոնդոնի կոնֆերանսում երկու հիմնական խնդիր էր հետապնդում. 1. ամեն կերպ խանգարել սովետա-թուրքական քաղաքական մերձեցման, 2. անջատ համաձայնության դալ քեմալականների հետ, նրանց օգտագործելով միաժամանակ Անգլիայի դեմ: Վերջին խնդրում Ֆրանսիական դիվանագիտությունը որոշակի հաջողության հասավ. 1921 թ. մարտի 9-ին Բեքիր Սամիր-բեյը և Բրիտան ստորագրեցին Ֆրանս-թուրքական քաղաքական, ռազմական ու տնտեսական համաձայնագիրը հետևյալ պայմաններով.

1. Թշնամական գործողությունների դադարեցում և ռազմազերինների փոխանակում.

2. Զինված բնակչության և հրոսակների զինաթափում՝ Ֆրանսիական և թուրքական հրամանատարություն համաձայնությամբ.

⁸⁵ Մանրամատն տե՛ս Halide Edip., The Turkish Ordeal. Being the further memoirs of Halide Edip. London, 1928, էջ 234—236.

⁸⁶ Մեր կարծիքով, սխալվում են այն թուրքագետները, որոնք Լոյդ-Ջորջի հետ ռենցած Բեքիր Սամիր-բեյի զադտնի գիտում են սոսկ որպես վերջինիս անձնական նախաձեռնության հետևանք: Իրականում, սակայն, գործը մի փոքր ալլ ընդլի՛ էր կրում: Բեքիր Սամիր-բեյի պատվիրակությունը Անկարա վերադարձավ Ինոնյու զյուլդի մոտ 1921 թ. մարտի 31-ին քեմալական զորքերի տարած երկրորդ հաղթանակից հետո և հենց այդ հանգամանքը փոփոխություն առաջ բերեց Անկարայի կառավարության դիրքում՝ նրան զարժնելով առավել անհանգուստ: Հայտնի է, որ Թուրքիայի Ազգային մեծ ժողովը Բեքիր Սամիրին լիազորություններից զրկեց այդ հաղթանակից և, միաժամանակ, այն բանից հետո, երբ հայտնի դարձավ, որ Անտանտի տերությունները չեն համաձայնվում բավարարել թուրքերի հիմնական պահանջները: Ուշադրության արժանի է նաև այն փաստը, որ մի քանի ամիս հետո, 1921 թ. օգոստոսին, Բեքիր Սամիր-բեյը Քեմալի կողմից նորից ուղարկվեց Եվրոպա Անտանտի պետությունների հետ համաձայնության գալու համար հող նախապատրաստելու նպատակով:

3. Ոստիկանական ուժերի ստեղծում (արդեն ստեղծված ժանդարմերիայի օգտագործմամբ)՝ թուրքական հրամանատարության ներքո, ընդգրկելով նաև թուրքական կառավարության տրամադրության տակ դրված ֆրանսիական սպաներին.

4. Ֆրանսիական ու թուրքական հրամանատարության համաձայնությամբ մեկ ամսվա ընթացքում (թշնամական գործողությունները զադարեցնելուց հետո) ազատել պատերազմող կողմերի գրաված այն տերիտորիան, որն ընկած էր Սևրի պայմանագրով գծված սահմանից հյուսիս: Թուրքական զորքերը հեռանում են առաջինը և 8 օր հետո գրավում են ֆրանսիական զորքերի կողմից թողնված տերիտորիան.

Ժամանակավոր բնույթի միջոցներ կձեռնարկվեն՝ կապված այն տերիտորիաների պարզման հետ, որոնք Սևրի պայմանագրով տրվել էին Սիրիային և որոնք ներկա համաձայնագրով, նրանց էթնիկական բնույթից ելնելով, վերստին մտցվում են թուրքական պետության կազմի մեջ.

Նրկարատե պատերազմական վիճակի և դրանից առաջացած խորը ցնցումների հետևանքով, ֆրանսիական զորքերը աստիճանաբար հեռանում են ֆրանսիական ու թուրքական իշխանությունների կողմից սահմանված պայմանների համաձայն: Այդ նպատակով նրանք ստեղծում են հանձնաժողով հետևյալ ընդհանուր հիմքերի վրա. իսկական խաղաղեցում, Նփրատի և Ալեքսանդրիայի ժոցի միջև երկաթուղային հաղորդակցության ապահովում՝ ներառյալ Ամանոսի արհեստական կառույցների և Զերարլուաի կամրջի վերականգնումը, հրոսակների կողմից ունեցվողությունների առկայության ղեկավարում՝ պահակախմբի պահպանում, Ուրֆայի միջադեպում⁸⁷ մեղավոր անձանց պատժում.

5. Լիակատար քաղաքական ներում և Կիլիկիայի վարչական կազմի պահպանում իրենց պաշտոններում.

6. Պարտավորություն՝ պաշտպանել էթնիկական փոքրամասնությունները, նրանց հրաշխավորել բացարձակ իրավահավասարություն՝ ամեն տեսակետից և արդարացի կերպով հաշվի առնել բնակչության թվական հարաբերությունը՝ խառը ազգաբնակչություններնցող մարդերում ժանդարմերիայի ու տեղական վարչության կազմավորման ժամանակ հավասարակշռություն պահպանելու համար.

⁸⁷ Խոսքը ֆրանսիական կայսրորդի ոչնչացման մասին է:

7. Ֆրանս-թուրքական տնտեսական համագործակցություն՝ առաջնության իրավունք տալով այն կոնցենսիաներին, որոնք տրվելու են Կիլիկիայի, Ֆրանսիական զորքերի կողմից պարպւած շրջանների, ինչպես նաև Մամուրեթ-ու-Աղիզի, Դիարբեքիւրի և Սըւսսի վիլայեթների տնտեսական օգտագործման նպատակով, այն չափով, սակայն, որքան որ այդ բանը չէր իրագործվի անմիջականորեն օսմանյան կառավարության կամ օսմանյան քաղաքացիների կողմից՝ ազգային կապիտալների օգնությամբ.

Կոնցենսիա Ֆրանսիական խմբին՝ Արգանա Մադենի հանքերը շահագործելու համար:

Կոնցենսիաները, որոնք նախատեսնում են մենաշնորհ կամ արտոնություն, շահագործվելու են օսմանյան օրենքի համաձայն ստեղծված ընկերությունների կողմից:

Օսմանյան և Ֆրանսիական կապիտալների առավելագույն հնարավոր միավորում (որոնք կարող են հասնել օսմանյան կապիտալի 50 տոկոսին).

8. Թուրքական ու սիրիական մարզերի միջև մաքսային պատշաճ կարգի հաստատում.

9. Ֆրանսիական դպրոցական ու բժշկական հաստատությունների ու բարեգործական հիմնարկների պահպանում.

10. Ֆրանսիական կառավարությունը հատուկ վարչական ուժիմ կհաստատի Ալեքսանդրետի նահանգի համար, որտեղ բնակչությունը խառը կազմ ունի. նա պարտավորվում է թուրքական ցեղին պատկանող բնակիչներին հատկացնել ամեն տեսակի արտոնություններ՝ իրենց մշակույթը զարգացնելու և օգտվելու համար թուրքերեն լիզվից, որն այնտեղ պաշտոնական բնույթ կկրի, այն չափով, ինչ չափով արաբներենը և ֆրանսերենը.

11. Կիլիկյան դարպասների և սիրիական սահմանի միջև ընկած Բաղդադի երկաթուղու հատվածի հանձնումը Ֆրանսիական խմբին.

12. Թուրքիայի և Սիրիայի միջև սահմանը կսկսվի Ալեքսանդրետի ծոցում, Պարամից անմիջապես հարավ ընկած մասում ընտրված կետից, և այնուհետև կընթանա հիմնականում ուղիղ գծով դեպի Մեյդան էկբսը (երկաթուղային կայարանն ու վայրը մնում են Սիրիայի կազմում): Այնտեղից սահմանը կթեքվի դեպի հարավ-արևելք այն հաշվով, որ Մարսուվա վայրը թողնվի Սիրիային, իսկ Կարնարա վայրը, ինչպես և Քիլիս քաղաքը՝ Թուրքիային: Այնուհետև սահմանագիծը կհասնի երկաթուղուն Չոբանեյի կայարանի

մոտ, կանցնի Բաղդադի երկաթուղագծով մինչև Նիսիբիս և կհասնի Եփրատի ոլորանին Աղեկխից դեպի Հյուսիս և կանցնի Եփրատ գետով մինչև Ջեզիրե Իբն-Օմար:

Թուրքական մարտատների գիծը կսահմանվի ճանապարհից դեպի Հյուսիս, իսկ Ֆրանսիական մարտատներինը՝ ճանապարհից հարավ:

Համաձայնագրին կցված հավելվածում ասվում էր, որ մինչև պայմանավորվող կողմերի միջև ընդհանուր համաձայնագիր կնքելը, ռազմական գործողությունները կդադարեցվեն Կիլիկիայի ճակատում և Թուրքիայի ու Սիրիայի սահմանների վրա՝ հենց որ համապատասխան հրամաններ տրվեն զորքերին Ֆրանսիական ու Անկարայի իշխանությունների կողմից, սակայն ոչ ուշ, քան մեկ շաբաթվա ընթացքում:

Համաձայնագիրը կնքվում էր, առանց նրա տեականությունը որոշելու. ռազմական գործողությունները կարող էին վերսկսվել թե այս թե այն կողմից՝ մեկ ամիս շուտ պաշտոնապես տեղեկացնելով համաձայնագրից հրաժարվելու մասին⁸⁸:

Ֆրանս-թուրքական համաձայնագիրը, ինչպես երևում է նրա բովանդակությունից, Սևրի պայմանագրի համեմատությամբ, նախատեսում էր տերիտորիալ ղգալի փոփոխություններ հօգուտ Թուրքիայի, սակայն, միաժամանակ, մի շարք տնտեսական արտոնություններ Ֆրանսիային, արտոնություններ, որոնք, անկասկած, խախտելու էին թուրքական սովերենությունը: Համաձայնագիրը ճանաչում էր Ֆրանսիայի ազդեցության գոտի, մինչդեռ «Ազգային ուխտը» նման ոչ մի բան չէր հանդուրժում⁸⁹, այդ պատճառով էլ Թուրքիայի Ազգային մեծ ժողովը հրաժարվեց վավերացնել Բեքիր Սամի-բեյի ստորագրած փաստաթուղթը, և վերջինիս ստիպեց հրաժարական տալ:

Սակայն անկախ դրանից, Ֆրանսիան ինքը, ռեպարացիոն հարցում Անգլիայի աջակցությունն ստանալու համար, ստիպված եղավ վերջինիս հետ մեկտեղ մարտի 12-ին թուրքական ու հունական պատվիրակությանն առաջարկել նոր պայմաններ, որոնք նկատելիորեն տարբերվում էին հենց նոր ստորագրված Ֆրանս-թուրքական համաձայնագրի հոդվածներից.

1. Նեղուցների ապառազմականացում.

⁸⁸ «Международная политика новейшего времени в договорах, нотках и декларациях», ч. III, вып. 1, М., 1929, стр. 82—84.

⁸⁹ «La guerre de l'intépendance turque», p. 60.

2. 4. Պոլսի էվակուացիան դաշնակիցների կողմից.

3. Թուրքերի մասնակցությունը նեղուցների վերահսկողությանը. Թուրքիան, ինչպես գլխավոր տերությունները, կունենա երկու ներկայացուցիչ նեղուցների հանձնաժողովում.

4. Ֆինանսական հանձնաժողովում Թուրքիան կունենա ոչ թե խորհրդակցական, այլ վճռական ձայն.

5. Թուրքական զինված ուժերը կարող են ունենալ 75.000 մարդ, որից 30.000 զինվորներ և 45.000 ժանդարմներ.

6. Իզմիրի ամբողջ շրջանը, բացի բուն քաղաքից, կմաքրվի հունական զորքերից: Իզմիրի նավահանգիստը ազատ կհայտարարվի բոլոր երկրների առևտրի համար: Սուլթանի սուլվերենությունը ամբողջ վիլայեթի նկատմամբ կպահպանվի, սակայն այն կկառավարվի ինքնավարության ուժիմի համաձայն Ազգերի Լիգայի կողմից նշանակված քրիստոնյա նահանգապետի կողմից: Հինգ տարի հետո, ստեղծված վարչակարգը կարող է վերափոխության ենթարկվել, եթե կողմերից մեկը դիմի Ազգերի Լիգային:

7. Թրակիայի ստատուտը չի փոփոխվում, հույները մնում են այն տերիտորիայում, որը նրանց է անցել Սևրի պայմանագրի համաձայն.

8. Թուրքիայի արևելյան սահմաններում հայերին ապահովվում է «Ազգային օջախ», որի սահմանները կորոշի Ազգերի Լիգայի կողմից նշանակված հանձնաժողովը.

9. Քուրդստանը կօգտվի տեղական ինքնավարության ուժիմից՝ որոշակի երաշխիքներով քրդերին ու ասորա-քաղղեացիներին.

10. Թուրքիան կընդունվի Ազգերի Լիգա⁹⁰:

Դաշնակից տերությունների այս նոր առաջարկները Սևրի համաձայնությանը մի շարք զիջումներ էին պարունակում, ուստի և չէին կարող բավարարել հույներին, իսկ թուրքերին այդ առաջարկները ձեռնտու չէին այն պատճառով, որ դրանք հակասում էին «Ազգային ուխտին», մինչդեռ Անկարայի պատվիրակությունը Լոնդոնի կոնֆերանսին մասնակցություն ունեցավ միայն «Ազգային ուխտի» սկզբունքների վրա հիմնված պայմանագրի ստորագրելու նպատակով⁹¹: Մարտի 12-ին երկու պատվիրակություններն էլ՝ հունական և թուրքական, մերժեցին վերը թվարկված պայմանները: Լոնդոնի կոնֆերանսը անփառունակ վախճան ունեցավ:

⁹⁰ A. Mandelstam, op. cit., p. 184—185.

⁹¹ Кемаль Ататюрк, Избранные речи и выступления, М., 1966, стр. 227.

Լոնդոնի կոնֆերանսից հետո Թուրք-Ֆրանսիական հարաբերությունները «սառնություն» մի կարճատև շրջան ապրեցին, երբ Անկարայի Ազգային ժողովը 1921 թ. մայիսի 3-ին շեղյալ հայտարարեց Ֆրանս-Թուրքական համաձայնագիրը: Այնուհետև սկսվում է փոխադարձ այցելությունների և դիվանագիտական ղեկավարի մի շրջան, որն ի վերջո հանգեցրեց 1921 թ. հոկտեմբերի 20-ի Անկարայի պայմանագրին:

Ամփոփելով Թուրք-Ֆրանսիական դիվանագիտական հարաբերությունների զարգացումը 1919 թ. վերջից մինչև 1921 թ. Լոնդոնի կոնֆերանսը, հանդում ենք հետևյալ եզրակացությունների.

Ֆրանսիայի քաղաքականությունը Թուրքիայի նկատմամբ սլայմանավորված էր նրա տնտեսական, ֆինանսական ու քաղաքական առանձնահատուկ շահերով, որոնք պահանջում էին Թուրքիայի պետական ինքնուրույնության և տերիտորիալ ամբողջականության պահպանում: Ուստի Ֆրանսիայի քաղաքականությունն ուղղված էր Թուրքիայի հետ անշատ համաձայնության դալուն՝ այդ շահերն ապահովելու համար:

Ֆրանսիական դիվանագիտությունը Թուրքիայի հետ մերձեցումը ձգտում էր օգտագործել նաև հակասովետական նպատակներով՝ բնավականներին դուրս բերելու Սովետական Ռուսաստանի դեմ, նպատակ ունենալով Թուրքական դեմքի ուժով խանդարել սովետական կարգերի հաստատմանը Անդրկովկասում:

Ֆրանսիական կառավարող շրջանների Թուրքասիրական քաղաքականությունը, սակայն, հանդիպում էր Ֆրանսիայի դաշնակցի, իսկ իրականում ախոյանի՝ Անգլիայի դիմադրությանը, որն ամենևին չափազրգույն էր Օսմանյան կայսրության պահպանմամբ, այլ՝ ընդհակառակը, ձգտում էր բաժան-բաժան անել այն՝ առավել հարուստ հողամասերը իր ազդեցությանը ենթարկելու համար:

Մերձավոր Արևելքում գերիշխելու համար ծավալված պայքարում Ֆրանսիան հաճախ ստիպված էր լինում իր դիրքերը զիջել Անգլիային. դրա պատճառը Ֆրանսիայի կախվածությունն էր Անգլիայից՝ եվրոպական զործերում և վերջինիս ռազմական բացահայտ գերակշռությունը՝ Մերձավոր Արևելքի շրջանում:

Ստիպված լինելով իր քաղաքականությունը համաձայնեցնել, իսկ հաճախ՝ ենթարկել Անգլիային, Ֆրանսիան Սան-Ռեմոյում և ապա Սերում հանդես է գալիս նրա հետ համատեղ՝ կրելով, այդպի-

առվ, դիվանագիտական խոշոր պարտութիւն իր մերձավորարևելյան քաղաքականութեան մեջ:

Յրանսիական դիվանագիտութեան տատանումները շատ թանկ նստեցին Կիլիկիայի ազգաբնակչութեանը և, հատկապես, մեծ եղեռնը վերապրած հայերին, որոնք Յրանսիայի հովանավորութեանը ապավինելով վերադարձել էին Կիլիկիա՝ իրենց հայրենի օջախները:

Օգտագործելով Յրանսիայի անկալուն դիրքը, անգլո-ֆրանսիական սուր հակասութիւնները, Անկարայի ղեկավար շրջանները, հաստատուն ու վճռական քաղաքականութիւն կիրառելով, ձեռք բերեցին ռազմական ու դիվանագիտական հաջողութիւններ, որոնք հող նախապատրաստեցին 1921 թ. հոկտեմբերի 20-ի Անկարայի պայմանագրի ստորագրման համար:

Р. Г. СААКЯН

ТУРЕЦКО-ФРАНЦУЗСКИЕ ОТНОШЕНИЯ В 1919—1921 гг.

Резюме

Турецко-французские отношения занимают особое место в дипломатической истории Турции в период ее национальной войны. Франция первая из западных держав вступила на путь соглашения с Турцией и заключила с ней Анкарский договор 1921 г.

Политика Франции по отношению к Турции определялась ее особыми экономическими и финансовыми интересами, которые требовали сохранения территориальной целостности Турции. Поэтому и французская политика была направлена на сепаратное соглашение с Турцией для сохранения этих интересов.

Сближение с Турцией французская дипломатия стремилась использовать также в антисоветских целях—подстрекая кемалистские круги на выступление против Советской России и пытаясь турецким оружием помешать установлению советского строя в Закавказье.

Туркофильская политика французских правящих кругов наталкивалась, однако, на сильное противодействие Англии,

в тот период уже не заинтересованной в сохранении Османской империи, а наоборот, стремившейся расчленив Турцию. В этом единоборстве Франции часто приходилось подчинять свою политику ближневосточной политике своей союзницы, а на деле соперницы—Англии. Объяснялось это зависимостью Франции от последней в европейских делах и явным военным превосходством Англии на Ближнем Востоке.

Этим объясняется поддержка французскими кругами позиции Англии в Сан-Ремо и Севре, что явилось поражением французской ближневосточной политики.

Неустойчивость внешнеполитических позиций Франции дорого обошлась в первую очередь населению Киликии, особенно пережившим трагедию 1915 г. армянам, вернувшимся в свои родные очаги.

Умело использовав колебания французской политики и англо-французские острые противоречия, правящие анкарские круги твердой и решительной политикой в 1919—1921 гг. добились военных и дипломатических успехов, которые увенчались подписанием с Францией Анкарского договора 1921 г.

Данная статья хронологически охватывает период с декабря 1919 г. по март 1921 г.—Лондонскую конференцию включительно.